

1650

491.99-
S-20

1912

2010

Հ. Արմ.
2-6462

491.99-1
S-26


ՁԵՐՆԱՐԿ

g-6462
ՄԴ

ԹԵՂԱԳՐՈՒԹԵԱՆ

— եկ —

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Բարեփոխած և ընդարձակած)

ԳԻՒՆ Է 15 ԿՈՊ.

Կ. 0. Զ. Մ. Ց

Մ. ՏԱՐԱԿՉԵԱՆ

258

ԻՆՎ. № 27462

Ժ/Մ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ
ՏՊԱԳՐՈՒԹ. Գ. Ա. ՍԱՀ. ԱՊԵԽԵՑԻ

1912

Խաչ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ.

HOOP, FLOOR & SUE.

§ 1 Խօսնիլիս մեր մտքերն արտայացտում ենք բառերով։ Խօսքը (բառ) մտածողութեան արտայացտութիւնն է բառիրով։ Խօսքը կազմում է մի կամ մի քանի բառերից։

Վարժութիւն 1. Հաշւել թէ իւրաքանչյուր խօսքում
քանի բառ կայ.

Արամը գլում է: Հաւը ելաւ թառը: Ցրտեց:
Շունը հաջում է աղքատի վրայ: Սուրբէնը, Զա-
վէնը և Խորբէնը խաղում էին այգում: Մի ծերուկ
ձկնորս և իր պառաւ կին բնակում էին մեծ ծո-
վի ափին:

§ 2. Խօսքից յետոյ դրտւմ է վերջակէտ. Գրութեան սկզբին եւ վերջակէտից յետոյ գրտւմ է մհծատառ: (Եղլաւայ նշան)

Վարժ. 2. Բաժանել մէկ խօսքը միւսից վերջակէտով.
վերջակէտից յետով պրել միծառառ:

Հաւը կուտ է ուտում պառաւը մի այծ ունէր
ուրախ երգում էր ծիծեռը փայլուն արևը արդէն
մայր մտաւ յունիսը մեզ խոտ է տալիս աղէէսը
մի այգի մտաւ մայիսին բազում է վարդոք:

§ 3. Խլքաքանչիւր բառ (слово) կազմւած է մի կամ մի քանի հնչիւններից: Հնչիւններն (звукки) ունեն իրանց նշանագրերը, որոնք կոչում են գեր կամ տառ (буква): Հնչիւններն մենք արտասանում ենք, իսկ տառերը՝ գրում:

Տառերը լինում են մեծատառ (զլխատառ) և
փոքրատառ։ Մեր լեզուն ունի հետեւել տառերը.
Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Շ, Ի, Լ, Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն,
Շ, Ո (ու), Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ւ, Ջ:

ЧЧ804-мк



29467-63

2002

ԶԱՅՆԱԻՐԾ ԵՒ ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՐԵՐ.

§ 4. Յառերը (հնչիմները) լինում են ձայնաւոր (гласныя) եւ բաղաձայն (согласныя):

Ձայնաւոր տառերն են՝ ա, ե, է, ը, ի, ո, ու, օ,
բաղաձայն տառերն են մնացածները (տես § 3):

§ 5. Բացի այս պարզ ձայնաւորներից կան նաև
երկբարբառներ. այ, ոյ, եա, եօ, իւ, աւ, ե:

Վարժ. 3. Զոկել ձայնաւորները և բաղաձայները.

Տան-դո, տան-դո... Նազլու, վեր կաց,
Արեն արդէն մայր է մտնում.

Տես, Խաթունն էլ գործը պրծած
Փողոցումն է, ժամ է շտապում:

Շուտով նախիրն հանդից կըդայ,
Գնանք, որ շուտ էլի յետ գանք,

Կովը կթենք, թը՛ռ-թը՛ռ կաթ տայ.
Կովը կթենք, մեր ցաւն հոգանք:

Վարժ. 4. Հետեւալ բառերից ջոկել երկբարբառները.

այծ,	լոյս,	սենեակ,	առիւծ,	եօթը,
կայծ,	բոյս,	լուսնեակ,	արիւն,	արդեօք,
գայլ,	զոյն,	կեանք,	հիւսիս,	արկ,
այսօր,	թոյն,	սիւնեակ,	հիւսն,	անձրի:

Վարժ. Զոկել երկբարբառները.

5. Այսօր ես այգում տեսայ մեր ծառային:
Հիւսնը եօթը տարեկան մի տղայ ունէր: Գայա-
նէն երեկոյեան մեզ մօտ հիւր էր եկել: Գայլը
պատառեց սի այծին: Արծիւր հսկայ ժայռի վրայ
բոյն էր հիւսել: Վարուր սայլով երեկոյեան այ-
գուց տուն էր դառնում:

Վ. Ա. Ն Կ

§ 6. Բառերը բաժանում են մասերի կամ վան-
կերի (слоги): Վանկ կազմում են ձայնաւորը կամ
երկբարբառը մենակ կամ բաղաձայների հետ միասին:

Բառի մէջ որրան ձայնաւոր եւ երկբարբառ լի-
նեն, այնքան էլ վանկ կըլինի:

Բառերը նայած վանկերի թիվն լինում են.

Միավանկ երկվանկ	Բազմավանկ (3, 4, 5...)
սար, ա-շուն, ա-ռու-ւօտ	ու-սում-նա-րան,
եզ, մայրիկ, երեկոյ,	եկեղեցի,
շիշ ընկեր, տանուտէր,	հայրենասէր,
էշ, կայսըր, մօրաքոյր,	բարեգործութիւն,
շուն, օրօր, ընտանի,	խնամակալութիւն,
օր, արօտ,	կենդանի,
	Աստւածասէր:

Վարժ. 7. Բաժանել վանկերի.

7. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԸ.

Առաւօտ էր: Արտրատեան դաշտը և Մասիս
լերան սպիտակավառ զագաթը փայլում էին
փարզագոյն շողերով՝ արեի առաջին շողերի ներ-
քեւ: Կանաչազարդ դաշտավայրը վառւում էր ծե-
ածանի նուրբ գոյներով: Փչում էր մեղմ հովիկը:
Գոյնզգոյն ծաղիկները ժպտում էին:

8. ՆՈՐ-ՏԱՐԻ

Արի, դու,	արի, քո դալըդ բարի,
Սիրուն նոր-Տարի,	նոր օրեր բեր մեզ,
Զիւն տուր սարերին,	անձրև՝ արտերին.
Կարկուտը՝ չարին,	զով արկը՝ մեզ:
Անթուփի ծաղիկից,	աններկ կարմրուկից,
Բարի ցաւերից ազատ պահիր մեզ:	

ՏՈՂԱԴԱՐՁ.

§ 7. Երբ տողի վերջում բառն ամբողջապէս չի տեղաւորում, բայսի մի մասն տակի տողն ենք տանում՝ տողադարձ (ուրենօշ) ենք անում:

2. Տողադարձ անելիս բառը նախ պէտք է բաժանել վանկերի և միայն ամբողջ վանկեր տանել միւս տողը:

3. Տողադարձի ժամանակ տողի վերջում դրւում է ենթամնայ (-) նշանը:

4. Միավանկ բառերը չի կարելի տողադարձ անել:

5. Բաղմագանկ բառերի մէջ, երբ երկու ձայնաւորի մէջ բաղաձայն տառ կայ, (օր. գարուն) բաղաձայնը յաջորդ վանկին է անցնում: (օր. ծաղիկ, օրոր, ամառ, արօսու:)

6. Բառերի մէջ, երբ երկու ձայնաւորի մէջ երկու բաղաձայն կայ, մէկը նախորդ վանկին է կցւում, միւսը՝ յաջորդ վանկին:

օրինակ. պատկեր, աղւես, երգիչ.
Աշխէն, ողնի, հրսկայ:

7. Բառերի մէջ, երբ երկու ձայնաւորի մէջ երեք բաղաձայն է պատահում, առաջին երկուսը նախորդ վանկին են կցւում, իսկ երրորդը՝ յաջորդ վանկին:

օրինակ. անձրի, թարգման, պաշտպան.
Աստղիկ, երդման, հանգչել:

8. Տողադարձի ժամանակ ը ձայնաւորը միշտ գրւում է, երբ տողի վերջում կամ տակի տողում մի վանկ է կազմում:

օրինակ. գընել, կընքել, կայսըր,
զըրկել, բըռնել, թանձըր:

9. Երբ երկու ձայնաւոր իրար մօտ են գալիս և երկրաբառ չեն կազմում, իրարուց բաժանուում են: (օր. Սամուէլ, Դանիէլ, արիստիբուտ):

10. Այ, ոյ, աւ, և, իւ երկրաբառերը բաժանուում են, երբ ձայնաւորից առաջ են դրւած: (օր. շղթայել, ամայի, շոյել, թեւաւոր, հիւանդ):

ՏԱՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

գ. ւ. ո.

§ 8. Վ. հնչիւնը արտայայտում է վ, ո, ո տառերով:
Վ. գրւում է բառասկզբում. (օր. վան, վոշ) բառամիջում եւ բառավերջում գրւում է ո-ից յետոյ (օր. ծով, սովոր):

վարդ,	վեր,	սով,	կողով,	հովիւ,
վրան,	վայրի,	հով,	ժողով,	հովիտ,
վիշապ,	վտակ,	կով,	բարով,	լիովին,
վահան,	վարդան,	զով,	օրով,	խորովել:

10. ԳԱՅՅԻՆ

— Միայն տէրը զլիխիդ խռով.

Ել չըտեսնես ոչխար բարով.

Գէր դմակի մնաս կարօտ,

Վիզդ կապեն կարմիր նարօտ.

Ծեծւես բրով, մեռնիս սրով,

Մարդիկ մորթիդ առնեն շուտով.

Շինեն իրանց մուշտակ աղւոր.

Շներ լինեն յուշարկաւոր.

Մեծ հանդէսով լէշդ տանեն քաշքանով,

Պատառ-պատառ յօշտելով.

Վրադ կարդան ծիծաղելով.

Աւաղ ու վայ քեզ ասելով:

§ 9. Վ. գրւում է բառամիջում, երբ բառը երկու բառեց է կազմած (բարդ է) եւ երկրորդ բառը վով է սկսուում:

Զօրավար, մսավաճառ, ձրիավարժ, ջրվէժ,
օրավար, մրգավաճառ, բառավերջ, միավանկ,
նաւավար, գրավաճառ, հաստավիզ, դաշտավայր.

Մեր գիւղի մօտ մի ջրվէժ կայ: Վարոսը թիւավարում է նաւակը: Անվախ-երկվանկ բառ է:
Հաստավիզ եղները վարում են օրավարը:

§ 10. և գրտւմ է բառամիջում եւ բառավերջում
ծայնաւորից առաջ եւ յետոյ, բացի ո-ից յետոյ:

հաւ, թիւ, սկ, զօրաւոր, նւէր,
նաւ, անիւ, թիւ, թագաւոր, պատէր,
կաւ, պատիւ, խկ, կեղծաւոր, հրաւէր,
պառաւ, հաշիւ, արկ, զլխաւոր, զրւում,
առւակ, տաւիդ, աւեր, ալեոր, ածւում,
օրւայ, Դաւիթ, ստւեր,* թևաւոր, կոչւում:

13. ԳԱՐՆԱՆԲ

Օրը տաքցաւ, ձիւնը հալւեց արկից,
Քչքչալով ջուր է հոսում դռներից,
Սար ու ձորեր զարդարւեցան կանաչով,
Դաշտը ծածկւեց ոչխարների հօտերով:

Զիւնը հալաւ, դաշտը ծլաւ,
Ալ ու ալւան շորեր հազաւ,
Դշուն-նշուն զարուն եկաւ:

14.-Բարով եկար Ծաղկաթաւալ,
Սև էշերի դու զլխաւոր,
Գովքդ անեմ շատ փառաւոր,
Մորթի ունիս մուշտակ աղւոր,
Եկած ճամբէդ ոլոր-մոլոր,
Քո գալուստդ շնորհաւոր,
Գէր դմակի ես դու սովոր:



*ԾԱՆՅԹ. ոմանք ձայնաւոր տառերից առաջ գրում են ոչ թէ և, այլ ու: (օր. Աստուած, առուակ, նուէր, առուի):

15. ՀՐԱՒԻՔԻ:

Հաւը խօսեցաւ, օրը բացւեցաւ,
Արեն էլ վաղուց ելաւ, բարձրացաւ,
Խելօք մանուկներ, շնւտ հագնւեցէք,
Շուտով դասատուն դուք հաւաքւեցէք:
Դաշտը գոյնզգոյն ծաղկով զարդարւած,
Մարգագետինը կանաչ հագնւած,
Անտառը ձմեռւայ քնից արթնացած,
Իր տերենները շարժում է կամաց:

16. ԽԵԼԱՑԻ ԱԳՌԱՒԻ:

Ագռաւը ծարաւ էր: Նա շատ դէսուդէն
ընկաւ, և վերջապէս դաշտում մի կճուճ տեսաւ,
որի մէջը ջուր կար. բայց ջուրն այնքան սակաւ
(քիչ) էր, որ ագռաւը չէր համնում: Նա մանր
քարեր ժողովեց և կճուճի մէջ ածեց. այդպիսով
ջուրն այնքան բարձրացաւ, որ նա խմեց, կշա-

ցաւ և թռաւ, հեռացաւ:

§ 11. Բառասկզբում երբ լսում է վօ, գրտաէ ո
(օր. ոտ, ոսկի) բացի վոհմակ, վոթել բառերից:
որ, որս, ոչ, ոզնի, ող, ոճիր,
որբ, որսորդ, ոչինչ, ողկոյզ, ոխ, ոզի,
որդ, Ոսկան, ոչխար, որդի, ոսպ, ողջակէզ,
որթ, ոսկի, ողջոյն, որոտ, ոստիւն, ոռոգել

18. Ոսկանը մի բաջ որսկան է: Ոչխարը որո-
ճում է: Կատուն մուկ է որսում: Ոսկին ազնիւ
մետաղ է: Վահանի ոտը ցաւում է: Խաղողի ող-
կոյզները կախւած էին: Նապաստակը ոստոստում
է անտառում: Վազգէնի որդին ոսպէ ապուր էր
ուտում:

Յ-Ն ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ.

§ 12. Երբ քառը ա-ով է վերջանում, ա-ից յետոյ գրեսմ է յ տառը, որը չի կարդացում:

Ծառայ, չուխայ, եկայ, վանայ,
փեսայ, ընծայ, տեսայ, Սևանայ,
գուլպայ, քուլպայ, օրւայ, Գեղամայ,
վկայ, քահանայ, հերւայ, Կողբայ:

20.-Մի նեղանայ փուշ բարեկամ,
Շատ ես կացել, կաց մի քիչ էլ.
Թուղթ ստացայ երեկ ձայից,
Թէ դուրս եկայ Արաբիայից,
Որտեղ որ է, շուտով կը գայ,
Դեռ մի բան էլ աւել կը տայ...
Զէ, քո արածն ով մոռանայ,
Իր Աստւածն էլ նա ուրանայ:

Ծառի ծին եմ ես. ելայ անտառից,
Քամու թեռվը, թուայ դաշտերից,
Անցայ սար ու ձոր, եկայ քեզ դրկից:

21. Հայրս կաթսայ գնեց: Մայրս գաթայ թիւեց: Ես մի շղթայ ընծայ, ստացայ: Փայլն ամպ օրը կուրախանայ: Ով որ փքանայ շուտով չըքանայ: Մինչև տղան շլայ, մայրը նրան ծիծ չի տայ:
Ես մի քահանայ տեսայ: Մեր ծառայ Վարոսը մի հսկայ է: Ես մի սպայ տեսայ որ լումայ (փող) էր բաժանում զինւորներին:

Զմեռւայ մի պարզըկայ երեկոյ էր. Ես դուրս եկայ փողոց սկսայ սահել սառոյցի վրայ, ոտքս սայթակեց, Ես փայր ընկայ, մնասւայ: Մի կերպ տուն հասայ, մի շաբաթ տանը պառկեցայ, հաղիւլաւացայ:

22. Տիգրանիկս գուլպայ չունի: Գաբրիէլս չուխայ չունի: Մեր տան պատից մի մեծ իսպիչայ է կախած: Ես թաժայ հաց կերայ: Միամսեայ մանուկը ատամներ չի ունենայ: Գիւղացիք քեչայ են պատրաստում: Ես անլւայ դուրս եկայ փողոց: Գէորգը շուկայ գնաց: Ծառի վրայ նստած էր աղաւնին. տեսայ նրան, մօտեցայ և կամեցայ բռնել, բայց չըկարողացայ: Կարկուտը անխնայ փչացրեց արտերը: Մենք ապրում ենք ծովափնեայ քաղաքում:

ԾԱՆՈԹ. հայ, վայ, ճայ, չայ, հարայ, բայ, մակրայ, բառերում յ կարդացում է:

§ 13. Ա-ով վերջացող յատուկ անունները (մարդկանց, քաղաքների, գիւղերի, սարերի, գետերի, լճերի յ տառը շեն ընդունում):

Աննա, Արա, Սինա, Ասիա, Անգլիա,
Եւա, Յուգա, Գինա, Եւրոպա, Բելանիա,
Սառա, Զարա, Վոլգա, Ամերիկա, Գերմանիա,
Լիա, Եղիա, Մոսկւա, Աֆրիկա, Դանիա:

§ 14. Յ շեն ընդունում հրաման (գործողութիւն) ցոյց տւող բառերը:

Ասա,	գնա,	հաւատա,	խոկա,
արա,	կարդա,	ժպտա,	տոկա,
խաղա,	լւա,	յուսա,	լողա,

§ 15. Յ շեն ընդունում նաև հետեւեալ բառերը.

Սա,	սրա,	սոցա,	հա,	հիմա,
դա,	դրա,	դոցա,	ահա,	ապա,
նա,	նրա,	նոցա,	հապա,	գոնեա,

Աննա,	գնա	մայրիկին	ասա,	որ	տուն	գայ:
Բանդ	արա	յետոյ	խաղա:	Արա	դասըդ	կարդա:
Եւա,	գնա	նրամօտ:	Եղիա,	մի	ժպտա:	

Սա ի՞նչ բան է: Հիմա ես աեսայ Զարային: Ահա ես եկայ: Հիմա նա ինչ է շինում տանը: Մասիս սարից դուրս է գալիս Գինա գետը: Մովսէս բարձրացաւ Սինա սարը: Եղբայրս Մոսկւա է գնալու: Երկրի հինգ զլխաւոր մասերն են՝ Ասիա, Եւրոպա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա: Մի հաւատական ուրիշներին. յուսա և աշխատիր:

§ 16. Բառավերջում ո-ից յետոյ գրւում է յ, որը չի կարդացւում:

Արգոյ	ներքոյ,	ի մօտոյ	Սամոյ,
Դշոյ	հաճոյ,	հեզաքարոյ,	Մշոյ,
Երեկոյ,	ականահաճոյ,	հրոյ,	Կարնոյ:
յետոյ,	ի վերջոյ,	սիրոյ,	

27. Ճաշից յետոյ ես պարտէղ ելայ: Երեկոյ էր, երբ տուն դարձայ: Ես ի մօտոյ ճանաչում են նրա քրոջը. նա մի հեզաքարոյ աղջիկ է: Մեր եկեղեցին շինւած է կոփածոյ քարից: Ես դուրս ելայ անտառ. իմ առաջ բացւեց ակնահաճոյ տեսարան: Մշոյ դաշտից հարաւ ձգւում են Սամոյ լեռները: Կարնոյ գաւառում շատ հայեր են ապրում:

ԾԱՆՈԹ. Խոյ, բոյ, նոյ բառերի մէջ յ-ն կարդացւում է:

Այն, քո, կեցն, բառերը յ չեն ընդունում.



Օ-ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

§ 17. Բառամէջում օ հնչիւնը երկու նշանազիր ունի օ եւ ո: Ալնի շատ գործ է ածում ո, աւելի քիչ՝ օ: Օ գրւում է բառասկզբեւմ երբ, զ է լուսում: օր, օդի, օտար, օրօրօց, այս-օր, օդ, օժիտ, օրէնք, օրիորդ, վառ-օդ, օձիք, օրինակ, օրհաս, ան-օրէն, օդ, օջախ, օրհաս, օրնել, բաց-օդեայ: ԾԱՆՈԹ. հետեւեալ բառերի սկզբում թէն լսում է օ, բայց գրւում է ո, այդ բառերն են. ով, Ովսէ, ովսաննա, ովկիանոս, ովազիս:

Օ-ն ԲԱՐԱՄԻՉՈՒՄ.

Ակօս,	ամօթ,	անօսր,	արօր,
աղօթք,	անօթ,	առաւօտ,	արօտ,
աղօտ,	անօթի,	առօք-փառօք,	արտօսր:

Միօնը առաւօտեան վաղ դուրս եկաւ արօտ, տեսաւ գիւղացուն, որը արօրով խոր ակօմներ էր փորում հողի մէջ: Մայրս աղօտ լուսով աղօթում էր: Աբէլը անօթի էր: Անամօթ կատուն առօք-փառօք բազմել էր թաղթին: Որը Աննան արտօսրալից աչքերով թափառում էր:

Լրացնել հետեւեալ բառերը. ակ×սել, աղ×թարան, աղ×թագիրք, թնդան×թ:

բօթ,	գօտի,	զբօսանք,	թօն,
գօս,	գրօշ,	զօրք,	թօթափել,
գօրծօն,	եօթն,	զգօն,	թօշնել:

Մրամը եղբօր գօտին կապեց և արօտ գնաց: Եեր գու, մանուկ, գործօն և ժիր: Մենք եօթն օր գիւղում մնացինք: Վաղուց է թօն չի եկել. ծաղիկները թօշնել են: Մեղուն թօթափեց վրայի փոշին: Զօրքը անցաւ մեր առաջով. առաջից գնում

Էր մի զինւոր դրօշակը ուսին։ Ես եղբօրս հետ
առաւոտեան զբունում էի արօտում։ Ուուրէնի
ձեռը գոսացած էր։

Լրացնել հետեւալ բառերը. գ×րավար, գ×րանոց,
զ×րաւոր, զ×րեղ, հզ×ր, զ×րահանդէս, զ×տե-
մարտ, պարեգ×տ, դր×շակ, բ×թաբեր։

իրօք, իսելօք, կարճառոտ, կարօտ,
լօշ, ծոստ, կրօն, կարծեօք,
խօսք, ծնօտ, կօշիկ, ծանօթ։

Մայրս այսօր լոշ էր թխում։ Իրօք, իմ ծա-
նօթիս՝ Սուրբիկի ծնօտը ցաւում էր։ Գուրգէնը
նոր կօշիկ էր հագել։ Կարօտ ենք տեսքիդ, ան-
ման գարուն։ Արօսը ծոստ էր տանում իր բու-
նը։ Խելօքները լսում են մեծերի խօսքին։ Այսօր
կրօնի դաս ունէինը։

Լրացնել հետեւալ բառերը. Ստախ×ս, շատախ×ս,
պարզախ×ս, մեծախ×ս, անծան×թ, ծան×թու-
թիւն, կար×տագին, ծդ×տապատ, անկր×ն։

հօտ, հօր-մօր, մօտ, ձօն,
հզօր, համառոտ, մօրուք, ձօճ,
հօտաղ, հետազոտել, զօղանջել,

Ոչխարների հօտը արածում էր արօտում։
Կարօն իմ հօրեղբօր հօտաղն է։ Առաւոտեան զո-
ղանջում էին զանգերը։ Հզօր առիւծը յօշուեց
աղւէսին։ Մօրս մօտ ծանօթներ կային։ Նրա մօ-
րուքը շէկ է։ Անտառի խորքում մի ճօճ կար
կապած։

Լրացնել հետեւալ բառերը. մ×տիկ, մ×տակայ,
ձ×ճիւն, ձ×ճանակ, հ×տարած, ձ×նել, ղ×ղան-
ջիւն։

յօդւած, յօշոտել, յօրինել, նօսր,
յօժար, յօրանջել, նարօտ, շօշափել.
պաշտօն, պոօշ, Պօղոս, յօնք.

Պօղոսը մօրեղբօրս մօտ պաշտօն ունէր։ Նա
յօժար կամքով թողեց իր պաշտօնը։ Սիօնը կրօ-
նի դասին յօրանջում էր։ Պօղոսի պոօշները ու-
ռել էին։ Նա յօնքերը կիտած նստել էր դռանը։
Բողկի նօսրն է լաւը։ Մանկան վզին նարօտ կա-
պեցին։ Մատներով մենք շօշափում ենք։ Ես մի
յօդւած յօրինեցի։ Փայլը յօշոտեց ոչխարին։

Լրացնել հետեւալ բառերը. յ×դւածագիր, յ×ժա-
րել, պաշտ×նեայ, անպաշտ×ն, շ×շափելիք։

Սօսափիւն, տօթ, Տարօն, օրօրոց,
սօսի, տօն, ցօղ, Սիօն
Սօս, Տօրոս, քօղ.

Տիրամօր տօնին զօղանջում էին զանգերը։
Սօսին անտառ զնաց. լսում էր ծառերի սօսա-
փիւնը։ Ծաղիկները տօթից թօշնել էին։ Մարիա-
մի օրօրոցը քօղով էր ծածկւած։ Սօսին զբօնում
էր ցողապատ արօտում։ Տարօնից հարաւ ձգւում
են Տօրոսի լեռները։

Լրացնել հետեւալ բառերը. տ×նափաճառ, տ×նա-
կան, ք×զարկել, ց×ղել.
ԺԱՆՈԹ. հօտ—ծաղիկների, հոր—ջրհոր.
հօտ—ոչխարների, հօր—հայրական։

35. ՊՕՂՈՍԸ.

Պօղոսը եօթը տարեկան մի խելօք երեխայ
էր։ Նա սիրում էր առաւոտները վաղ վեր կենալ։
Դեռ նոր էին սկսում զօղանջել եկեղեցու զանգե-
րը, նա արդէն ոտի վրայ էր. հագնում էր շտապով

շորերը, գօտին կապում, մի կտոր լօշ առնում և
դուրս վազում։ Կարօն ու Սաքօն՝ իրենց գիւղի
հօտաղները արդէն հաւաքած էին լինում հօտը և
քշում էին դէպի արօտ։ Պօղոսը շատ անգամ վա-
զում էր հօտի յետելից, առաւտօտեան հովին թոչկո-
տում էր խոտերի, կանաչների մէջ և կէսօրի մօտ
նորից գիւղ էր վերագառնում։

ԲԱՌԱՅՈՒԹԱԿ Օ-ով ԲԱՌԵՐԻ.

Ակօս,	Իրօք,	Յօդւած,
աղօթք,	Լօշ,	յօժար,
ամօթ,	Խելօք,	յօնք,
անօթ,	Խօսք	յօշտել,
անօթի,	Ծանօթ,	յօրանջել,
առաւօտ,	ծղօտ,	յօրինել,
առօք-փառօք,	ծնօտ,	նարօտ,
արդեօք,	Կարծեօք,	նօսր-անօսր,
արտօնութիւն,	Կարօտ,	շօշափելիք,
արտօսր,	Կրօն,	Պաշտօն,
արօս,	Կօշիկ,	պոօշ,
արօտ,	Համառօտ,	Պօղոս,
արօր,	հետազօտել,	Սօս, սօսի,
Բօթ,	հզօր,	սօսափիւն,
Գործօն,	հօտ,	սօսիւն,
գօտի,	հօտաղ,	Սիօն,
Դրօշ,	հօրոտ-մօրոտ,	Տօթ,
Եղբօր,	հօր,	տօն,
Էօթն,	Զօն,	Յօղ,
Զբոսանք,	Ղօղանջել,	Քօղ,
զգօն,	Ճօճ,	Թրօրոց,
զօրք,	Մօտ,	—
Թօթափել,	մօր,	Յօ, ծօ, հօ, օհօ,
թօն, թօնել,	մօրուք,	Կարօ, Մարօ,

Ե-ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 18. Ե ննչինը բառամիջում երկու նշանագիր ու-
նի՝ է, ե: Մեծ մասամբ զործ է ածում ե, աւելի քիչ՝ է:
Ե գրում է բառասկզբում եւ բառավերջում։

Էս, թէ, բազէ, եղիշէ, քարէ,
էդ, չէ, ափսէ, չեղինէ, ոսկէ,
էշ, եթէ, Մանասէ, Մուշէ, երկաթէ.

Թող վչէ քամին պաղ պաղ երեսիս։ Թող լոէ
մունջը։ Թող որսդ արի, քաջասիրտ բազէ, քո
երգը գուցէ իմ որդին կուզէ։ Եկեղեցում ոսկէ և
արծաթէ անօթներ կան։ Հեղինէ, Գայանէ, Հոփի-
սիմէ աղջկայ անուններ են։ Մենք պողպատէ
մուրճ ունինք։

§ 19. Բառամիջում է-ով գրում են այն բառերը,
որոնք բառի փոփոխման (ձայնափոխութեան) ժամանակ
է-ն փոխում է ի-ի։ (օր. տէր-տիրոջ, սէր-սիրել):

Բառերը փոփոխել այնպէս, որ է-ն ի դառնայ:			
Կէս-կիսատ,	սէր— [◦]	այնպէս— [◦]	քէն-քինախնդիր
պարտէզ— [◦]	տէր— [◦]	դէզ— [◦]	դէպք-դիպւածք,
զէն-զինւոր,	նէր— [◦]	գէշ— [◦]	անէծ(ք)— [◦]
շէն— [◦]	պատէր— [◦]	դէտ— [◦]	մէջ— [◦]

§ 20. Ե-ով գրում են հետեւեալ վերջաւորութիւն-
ները. պէս, սէր, շէն։

Այսպէս,	ջանասէր,	քարաշէն,
վերջապէս,	մարդասէր,	փայտաշէն,
իսկապէս,	ընկերասէր,	նորաշէն,
Վերջապէս եկաւ գարունը. ջանասէր գիւղա- ցին արօտ դուրս եկաւ։ Զարասէր մարդիկ երգ չեն սիրում։ Հայկաշէն գիւղը գտնւում է Վանայ գաւառում։ Վաղգենը ջանասէր տղայ էր։ Քաղա-	Մ. ՄԱԾԱԿԱՐ Ա. Ա. ՄԱԾԱԿԱՐ Ա. Ա. ՄԱԾԱԿԱՐ	

քացիք ապրում են քարաշէն տներում։ Մեր գաւառը լի է բարեշէն գիւղերով։ Վարդաշէն գիւղից ոչ հեռու ձգւում են գեղաշէն լեռներ։

Լրացնել հետեւալ բառերը. սոյնպէս, հիմնապէս, տնասքը, մայրասքը, տնաշան, անշան։

§ 21. Եռով գրւում են հետեւալ վերջաւորովինները. բէն, եղէն, ւէտ։

հայերէն, անօրէն, մսեղէն, խոտաւէտ, ոռւսերէն, մեղմօրէն, բուսեղէն, ծաղկաւէտ, յունարէն, խստօրէն, հրեղէն, հոտաւէտ։

Ոչխարների հօտը արածում էր կանաչաւէտ արօտներում։ Մրգեղէնը Երևանում էժան է։ Մեր այգում շատ մրգաւէտ ծառեր կան։ Մենք այսօր ճաշին մսեղէն և իւղեղէն կերակուրներ կերանք։ Վարդը հոտաւէտ ծաղիկ է։ Երևանը այգեւէտ քաղաք է. նրա այգիները գինեւէտ են։ Բուսեղէնը մեր գիւղում առատ է։ Ես գիտեմ հայերէն և ոռւսերէն կարդալ և զրել։ Անօրէն մարդիկ քիչ կան։

Լրացնել հետեւալ բառերը. գերմաներքն, թուրքերքն, բրդեղքն, սպիտակեղքն, հիւթաւքտ, կանաչաւքտ։

§ 22. Եռով գրւում ան յատուկ (մարդկանց) անոնները, որոնք վերջանում են՝ էն, էս, էր, էփ, էթ։

Ներսէս, Սուրէն, Արէլ, Յովսէփ, Վաղէս, Խորէն, Զարէլ, Յաբէթ, Վարդպէս, Գուրգէն, Միքայէլ, Մէթ,

Կայէնը Արէլին չէր սիրում։ Յովհաննէսը հրեղէն ծի ունէր։ Մովսէսն իջաւ Մինա սարից։ Արսէնը և Ռուրէնը ընկերներ էին։ Արիստակէսը և Վրթանէսը եղբայրներ էին։ Միքայէլն ու Գար-

րիէլը գնում էին ուսումնարան։ Արտաշէսը ջանասէր աշակերտ է։

Եռով գրւում են արծողութիւն ցոյց տւող բառերը էք, էի, էիր, էր վերջաւորութիւններով։

Ասացէք, ունէի, կ'ուտէի, գնացէք, ունէիր, կ'ուտէիր, առէք, ունէր, կ'ուտէր։

— Ով քնած էք — արթուն կացէք, Ով արթուն. էք — ելէք, կեցէք, Ով կեցեր էք — զէնք կապեցէք, Զէնք էք կապել — ձի թամբեցէք, Զի էք թամբել — ելէք, հեծէք, Յետոյ չամէք, թէ մենք քնած, Դաւիթ գող-գող եկաւ, գնաց...»

Մէկ գիւղացի մի պարտէզ ունէր, Զգիտէր ինչպէս պահէր, պահպանէր։

§ 24. Եռով գրւում են նաև՝
 գէզ. քարաղէզ, բարձրաղէզ, փրփրաղէզ,
 կէզ. տօթակէզ, ողջակէզ, հրակէզ, արևակէզ, բոցակէզ,
 գէմ. յառաջաղէմ, ընդղէմ, գւարթաղէմ, սեաղէմ,
 գէն. հրաղէն, անղէն, սպառաղէն, քաջաղէն,
 գէպ. իրէպ, հանդէպ, ինքնաղէպ, տարաղէպ,
 մէջ. գիւղամէջ, թիկնամէջ, մնամէջ,
 գէտ. հնագէտ, սրտագէտ, գրագէտ, խորագէտ, իրագէտ,
 գէտ. հրաշաղէտ, քաջաղէտ, բարձրաղէտ,
 պէտ. սակաւաղէտ, ումպէտ, անպէտ(ք),
 տէր. ծխատէր, տանուտէր, անտէր, տանտէր,
 ընկէց. թագընկէց, գահընկէց, ջրընկէց.

§ 25. Է-ով զրտում են եւ հնտեւեալ բառերը.

Հայր—հէր, եղբայր—ախպէր, սարից—սարէն, օրէօր
ձայն—ձէն, ժայռ—ժէռ, դոնից—՝ ամսէամիս,
գայլ—՝, մայր—՝, պատից—՝, պատէպատ,
սայլ—՝, մայրի—՝, տանից—՝, դոնէդուռ,
տղայ—տղէք, երեխայ—՝, կողմից—՝, անէտուն.

ԾԱՆՈԹ. Սեր գրտում է ե-ով, երբ նշանակում կաթի սեր:

43. ԱՆԳՐԱԳԵՏԸ.

ԵՐԲԷՔ մէկին չեմ նախանձում
Ես աշխարհի երեսին,
ՄԻՒԱՅՆ, զրագէտ դուք պարոններ,
Նախանձում եմ ձեր բախտին.

ԱՌԻ, զթացէք գեղջուկ որբիս,
ՄԻ լաւութիւն միայն արէք—
Տըւէք մի թերթինձ ճերմակ թուղթ,
ՄԻ փետուրէ զրիչ տւէք:
Եւ ինձ զրել սովորեցրէք,
Սովորեցրէք, լաւ, շուտով,
ՈՐ զրիչս կայծակից էլ արագ թռչի զրելով:

—Հուր ունիմ հրեղէն,
Բուրգառ ունիմ բոցեղէն,
Ամեն թելս է լուսեղէն:

44. ԲԱՌԱՅՈՒՅԱԿ Է-ՈՎ ԲԱՌԵՐԻ.

Ախտաժէտ	Եղէզ,	Պատճէն,
աղէտ,	երէց,	պատնէշ,
աղւէս,	Զէն-զէնք,	պատէր,
ամէն,	Թէկուզ,	պարէն,
անէծք,	թէպէտ,	պարտէզ,
անշէջ,	Ժապաւէն.	պէս-պէտ,
անզրէպ,	Խէթ, խէժ,	պնակալէզ,
անօրէն,	խլէզ,	—
ապաւէն,	Ծէս,	Զրվէժ,
առնէտ,	Կոճղէզ,	Մէգ, սէզ,
ասպարէզ,	կէս, կէտ,	սէր, ստէպ,
արևակէզ,	կրկէս,	Վէզ, վէճ,
—	Հակամէտ,	վէմ, վէպ,
Բզէզ,	հանդէպ,	վէտ,-վէտ,
բւէճ,	հանդէս,	վէր,-վէրք,
բէկ,	հրաւէր,	վրէժ,
Գէթ,	հրէշ,	Տգէտ,
գէշ, լէշ,	հէք,	տէզ, տէր,
գէզ-գէս,	—	տնօրէն,
գէր,	Զէթ,	—
գոմէշ,	Մէգ, մէզ,	Փէշ,
Դէզ, դէմք,	մէջ, մողէս,	փոխարէն,
դէպ, դէպի,	Ցաւէտ,	Քարտէզ,
դէս, դէն,	Նւէր,	քէն,
դէտ,	Շէկ, շէն,	Օրէնք,
—	շրէշ,	—

Է-ՈՎ ԳՐԻՈՂ ԲԱՌԵՐ.

45. Ախտաժէտ մարդիկ պէտք է ստէտ ստէպ
լւանան իրանց մարմինը: Պօղոսի հետ այսօր աղէ-
տալի դէպք պատահեց: Աղւէսը մի պարտէզ մտաւ.

հիւթաւէտ պառւղները կախւած էին ծառերից.
թէպէտ նա շատ դէսուդէն ընկաւ, որ ձեռը թէ-
կուզ մի քիչ բան ընկնէր, բայց իզուր. մեր աղ-
ւէսը անէծք կարգալով՝ դուրս ելաւ պարտիզից:
Անօրէն Ռուրէնը ճզմում էր բգէզին: Ասպարէզը
ջանասէրինն է: Մեր ապաւէնը Աստած է:

46. Գէր գոմէշը արածում էր կանաչաւէտ
արօտում: Գէթ այսօր դասղ իմանայիր: Այ տը-
ղայ, գէշ մի լինի: Յովհաննէսը նստած էր դէզի
տակ: Կան աստղեր, որոնք գէս ունին: Տգէտ Մի-
քայէլը քէն ունէր իր դրացի Շահէնի դէմ: Ես
անգրագէտ, ես անուս եմ, սովորեցրէր, պարոն-
ներ: Կայէնը Արէլի դէմ խէթ ունէր. նա իր վրէ-
ժը լուծեց նրանից: Դէպի նուր, ինձ ասա, թոշում
ես այդպէս արագ:

47. Յովհէփը Սիւքէմում ոչխարներ էր ա-
րածացնում: Յիսուս ծնւեց Բեթղեհէմ քաղա-
քում: Յիսուս քարոզում էր Երուսաղէմի տաճա-
րում: Հայր Յովհէփը բնակւում էր Նազարէթ
քաղաքում: Աղւէսը թափառում էր Եղէզներում:
Քահանային Երէց էլ են ասում: Ես սիրում եմ
զէնք կրել: Ազուաւը լէշի հոտ էր առել: Մենք
անտառում ծառերից խէթ էինք հաւաքում: Խլէ-
զը բարձրանում էր ծառը: Կէս օրւայ շոգին մենք
արևակէղ եղանք: Մեր եկեղեցու գմբէթը բարձր է:

48. Սէթը անտառում կոճղէղ էր հաւաքում:
Այսօր մեր տանը հրաւէրք կար: Մէգ-մառախու-
ղը առաւօտեան պատել էր գետինը: Պասին ձէթ
են ուստում: Խոր անտառի մէջ մէկ հրէշ էր ապ-
րում: Մեր գպրոցում հանդէս կար: Արսէնը և
Խորէնը գնացին շուկայ պարէն առնելու: Մողէսը

վազում էր քարերի մէջ: Ես Զարէլից մի քարտէզ
նւէր ստացայ: Վազգէն, մի մոռանայ հօրդ պատ-
էւրը: Իմ մօրեղբօր որդին շէկ մազեր ունի: Մեր
առւի մօտ մի պատնէշ կայ: Թող արցունք ցայ-
տեն քո սէդ սե աչեր: Արաւշէսը և Թաղէոսը
վէգ էին խաղում. նրանք վէճի բոնւեցին:

49. Ես շատ եմ սիրում վէպեր կարդալ: Շար-
ժեցէք գեփիւռ, ալիքը վէտ վէտ: Արէսը ոտին
վէրք ունէր: Հնումը տէգ էին զործ ածում: Մեր
գիւղի մօտ մի ջրվէժ կայ: Հեղինէն Երկար վէշեր
ունի: Օրէնքի առաջ ամենքը հաւասար են: Գուր-
գէնը հիւանդ էր. նրա փոխարէն այսօր Աշխէնը
շուկայ գնաց: Վէս Տրդատը հզօր թագաւոր էր:
Մեր տան տէրը և տնօրէնը հայրս է:

Հ-ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 25. Հ զրւում է բառասկզբում եւ բառավերջում,
իսկ բառամիջում սովորաբար չի զրւում:

Ընծայ, ընկոյզ, սարը, վտակ, խրճիթ,
ընկեր, ընտանի, ծառը, տնակ, բլիթ.

§ 26. Մկ, սպ, սթ, շտ, զբ, զգ բաղաձայներով
սկսող բառերից առաջ ը չի զրւում:

սպաս, ստակ, զբօսանք, սթափւել,
սպայ, շտապ, զգալ, սքանչելի.

Ես սպասում էի, որ Ստեփանը գար և գնա-
յինք զբօսնելու: Ծառան սպանեց տիրոջը և շտա-
պով փախաւ: Մարդս հինգ արտաքին զգայարանք
ունի:

§ 27. Հ զրւում է բառամիջում, երբ երկրորդ բա-
ռը ը-ով է սկսում:

Դասընկեր, սըլնթաց, խաղընկեր, հիւրընկալ,
նորընծայ, հատընտիր, քարընկէց, ջահընկալ.

Յ-ի ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

53. ԲԱՌԱՑՈՒՑԱԿ Յ-ով ԲԱՌԵՐԻ.

Յաճախապակի,	յարկ	յոգնակի,
յակինթ,	յարձակւել,	յոգնել,
յաղթ-յաղթել	յարմար,	յոգւոց (հանել)
յաճախ,	յաւելւած,	անյողդող,
յամառ,	յաւիտեան,	յուզւել,
յամր-յամրաքայլ,	յաւերժ,	յոյժ-յոյս,
յայտնի,	յափշտակել,	յոյն,
յանդիման	—	յոպոպ,
յանգ,	Յեղաշրջել,	յոռի,
յանդուգն,	յեղափոխել,	յովազ,
յանկարծ,	յեղյեղուկ,	յորդ-յորդոր,
յանձնել,	յենարան,	յորձանք,
յանցանք,	յետ-յետին,	յուլիս-յունիս,
յաջորդ,	Յիմար,	յունւար,
յաջող,	յիշտակ,	յուղարկաւորող,
յառաջ,	յիշոց,	յուշիկ,
յառել,	յիսուն,	յստակ,
յասմիկ,	յիրաւի,	յօդւած-յօդ,
յատակ,	յղի,	յօժար,
յատուկ,	յղել-յղկել,	յօշոտել,
յարատեն,	—	յօրանջել,
յարգանք,	Յոբելեան,	յօրինել.

54. Յախճապակուց անօթներ են չինում:
Յուսիկի մօտ մի յակինթ տեսայ: Յակովբը յա-
ճախ լինում է Յովհաննէսի մօտ: Արծաթասէր
Յուղան մատնեց Յիսուսին: Յիսուս չի սիրում

յամմառ և յանդուգն մանուկներին: Ես յաջող
քննութիւն տւի և անցայ յաջորդ դասարանը:
Յովակիմը և Յովսէփը յամմը քայլերով գնում էին
այգի: Մեր սենեակի յատակը ներկած է: Արևը
յաղթեց ամպերին: Յայտնի եղաւ, որ Յովհաննէսը
մեծ յանցանք էր գործել:

Լրացնել հետեւեալ բառերը. ×աճախակի, ×աճա-
խել, ×աջողութիւն, ×աջորդարան, ×աջորդել,
×ատակագիծ, ×անցագործ, ×այտնութիւն:

55. Մեր պարտիզում յասմիկի թփեր կան:
Ես շատ եմ յարգում իմ ուսուցչին: Յովսէփը
յարմար բոպէին յառաջ անցաւ և յարձակւեց
Յուսիկի վրայ: Ես յաւիտեան չեմ մոռանայ նը-
րան: Իմ տետրակը յանձնեցի Յակովբին: Գայլը
յափշտակեց հովւի ոչխարը: Այս դէպքից յետոյ
ծերը տուն դարձաւ: Յիմար, չես ուզում մի յի-
շատակ թողնել: Կեանքի պայմանները յեղյեղուկ
են: Յիրաւի դու շատ յիմարն ես, Յովակիմ: Դու
իզուր ես յեղաշրջում փաստերը:

Լրացնել հետեւեալ բառերը. ×արգելի, ×իշատա-
կարան, ×իշատակել, ×իմարանալ:

56. Մօտակայ սարից յստակ աղբիւր է բըղ-
խում: Ես սաստիկ յուզւեցի, երբ իմացայ, որ
յանցագործները յարձակւել են հօրս վրայ: Յու-
նիս, յուլիս ամառւայ ամիսներ են: Յունւարը
տարւայ առաջին ամիսն է: Այսօր յորդ անձրև
եկաւ: Ես ներկայ էի Յուսիկի յուղարկաւորու-
թեանը: Ես շատ յորդորեցի Յովսէփին, որ չը յու-
սահատւի: Յովազը յօշոտեց յիմար ոչխարին: Աչ-
քիդ վերել յօնը կայ: Յունիսը մեզ խոտ է տա-
լիս, իսկ յուլիսը՝ առատ ցորեն:

57. Ես մի յօդւած յօրինեցի: Յարութիւնը յոգնածութիւնից շարունակ յօրանջում էր: Յոյները հին յայտնի ազգերից են: Ես յօժար կամքով նետւեցի յորձանուտ տեղը, ազատելու Յակովին: Ես գիտեմ մինչև յիսունը համարել:

ԲԱՂԱՁԱՅՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 28. Բաղաձայն տառերը աւելի պարզ են հնչում՝ երկու ձայնաւորի մէջ:

Կան մի բանի բաղաձայներ, որոնք նման հնչիւն ունին. դրանք են. ց, ք, թ, չ, փ, խ, լ,
ձ, գ, դ, ջ, բ, դ, ո,
ծ, կ, տ, ճ, պ,

Երբ բառը վերջանում է բաղաձայներով, որոնք պարզ չեն հնչում, պէտք է բառը փոփոխել այնպէս, որ բաղաձայնից յնոյ ձայնաւոր լաւի:

Վարդ-վարդի, օձ—^o, կեղծ—^o, ձուկ—^o,
ձագ-ձագուկ, դարտ—^o առողջ—^o, ողբ—^o

§ 29. Ծով գրում են ած վերջաւորուող բառերը, որոնք ցոյց են տալիս առաջկայի որութիւնը. Նրանք պատասխանում են ի՞նչպիսի, ո՞րպիսի, ի՞նչպէս է հարցերին:

Հասած պտուղ: Մաշւած կօշիկ: Քնած ագուաւ:
Ծեծւած արտ: Չորցած խոտ: Ամօթխած հարսիկ:

Դեղնած դաշտերին իջել է աշուն: Ծիրը կծկած նստած էր ծառին: Աստած գթած և ողորմած է: Հացը դրած, բանն անիծած: Կարկուտը ծեծած տեղը կըծեծէ: Տաշած քարը գետնին չի մնայ: Պողոսը յօնքերը կիտած, ուռած ու փքւած նստած էր դռանը. ձեռքով բռնած ունէր ցաւած ծնութը: Քաղցած աղւեսը մի պարտէզ մտած չը մտած, որսորդը ընկաւ յետեկց: Մշակը բեռը շալակած տուն էր գնում: Ո՞հ, մի ողբալ դու թառամած ու դալկացած մանուշակ: Սուրէնը յոգնած ու տանջւած էր երեւում: Սոված ագուաւը լէշի հոտ էր առել:

§ 30. Յով գրում են գործողութիւն ցոյց տոռդ բառերը, որոնք պատասխանում են՝ ի՞նչ արեց, ի՞նչ եղաւ հարցերին:

Օր. գնացի, գնացինք, բաժանեցի—^o զարմացայ—ցանք,
գնացիր, գնացիք, բաժանեցիր—^o զարմացար—ցաք,
գնաց, գնացին, բաժանեց—^o զարմացաւ—ցան.

60. Լուսնեակը ցոլաց գնաց. դէմ առաւ ամպին մնաց: Հաւը խօսեց երեք բերան: Մենք արժանացանք ուլրախ մայիսին: Ցուրտը փչեց ձմեռ սաստիկ, ձիւնը ծածկեց գետինը: Գիւղացին սայլը լծեց, գնաց անտառ:

Յով գրում են այն բառերը, որոնք պատասխանում են ո՞ւմնից, ի՞նչից, ո՞րտեղից հարցերին:

61. Մայրը նամակ ստացաւ իր որդուց: Սուրէնը գալիս էր պարտէզից: Ոսկուց և արծաթից զարդեր են շինում: Աշխէնը վայր ընկաւ պատից: Կաւից ամաններ են շինում: Ծովից փչում էր մեղմ քամին: Գէորգը անբաւական էր իր եղբօրից: Մեր գիւղից մինչև քաղաք վեց վերսու է: Մենք գոհ ենք մեր վիճակից: Զուկը զլխից կըհոտի: Լաւ ծառից լաւ պտուղ կստացւի: Ծաղիկները թօշնել էին տօթից: Ծառերից թափւում էին տերենները: Գողերից պէտք է զգուշանալ: Չարերից ու վատերից հեռացիր:

§ 31. Կով գրում են ակ, ուկ, իկ փաղաքշական և ական մասնիկներով վերջացող բառերը:

Հարս-հարսիկ, թի-թիսկ, շիրը-գրքոյկ,	տօն-տօնական,
այծ— ^o ,	սայլ— ^o
հայր— ^o ,	գառն-գառնուկ, մայր— ^o
ձագ— ^o ,	տետր— ^o , մէջ-միջուկ,
քոյր— ^o ,	էշ— ^o ,
	հոգի-հոգեկան,
	ընտանի— ^o .

ԳԼԽԱՏԱՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ.

§ 32. Գլխատառով կամ մեծատառով գրւում են.

ա. Վերնագիրների առաջին բառերը: (Օր. Շունն
ու կատուն):

բ. Գրութեան սկզբի եւ վերջակէտից յետոյ եկող
առաջին բառերը: (Օր. Սագը լողում է: Անձրև,
անձրև ցած արի):

գ. Յատուկ անունները. (Ճարդկանց, Աստուծոյ, Քաղաք-
ների, Գիւղերի, Ենոների, Գետերի, ծովերի, Երկրների, Գաշտերի):

դ. Կայսեր, Կաթուղիկոսի եւ այլ բարձրաստիճան
անձանց պատշաճ կոչումները:

ե. Գրւածքների անունները. (Օր. Բաֆֆու Խեն-
թը, Աղայեանի Արեգնազանը):

զ. Ոտանատրների իւրաքանչիւր տողի առաջին բառը:

63. Խորէնը Աննայի հետ Աշխէնի մօտ կնաց:
Սուրբ Մեսրոպը թաղւած է Օշական գիւղում:
Աւանայ լճում որսում են իշխան ձուկը: Վանայ
լճում գտնւում է Աղթամար կղզին: Խրիմեան
Հայրիկը ծնւել է Վան քաղաքում: Երկանից ոչ
հեռու գտնւում է էջմիածնի վանքը: Ասին գտնը-
ւում է Ախուրեան գետի ափին: Երասխ գետը
անցնում է Արարատեան դաշտով. նա իր մէջ
աջ և ձախ կողմից ընդունում է՝ Ախուրեան, Գի-
նա, Տղմուտ, Կարմիր, Հրազդան և Որոտն գետե-
րը: Հսկայ Մասրսի դիմաց կանգնած է Արագածը:

64. Յիսուս ծնւեց Բեթղեհէմ քաղաքում:
Յիսուս ապրում էր Նազարէթ քաղաքում, իր
ծնողներ՝ Մարիամի և Յովսէփի մօտ: Զաքարիայի
որդի՝ Յովհաննէս-Մկրտիչը քարոզում էր Յորդա-
նան գետի մօտերքում: Յիսուս քարոզում էր
Երուսաղէմի տաճարում: Յակովը, Պետրոս և
Յովհաննէս Քրիստոսի աշակերտներն էին:

ԲՈԼՈՐ ԸՆՑԵՑՆԵՐԻ ԿՐԵՆՈՒԹԻՒՆ.

65. «ԳԱՅԼ-ԿԱՊԻ» ԱՂՋԹՔԸ.

Գայլը կապեմ երկու բթով,
Աստւածածնայ քաղցը կաթով,
Սուրբ Սարգսայ ձիան ձարով
Տէր Մովսէսի գաւազանով,
Լուսաւորչայ սուրբ հաւատով,
Լեզուն կապւի, ակուն թափի,
Եկած ճամբան գայ մոլորի,
Իմ տիրոջս խաչը տեսնի,
Դիւանի պէս թող սասանի...

66. ՀԱՅՐԸ ԵՒ ՈՐԴԻՔԸ.

Մի մարդ երկու որդի ունէր: Մի անգամ հա-
յեաններն ասացին, թէ նրա որդիքը ծիծաղել են
մի պառաւ կնոջ վրայ: Հայրը խիստ յանդիմանեց
և երեխաները խոստացան ուղղել: Բայց նրանք
շատ չանցած, մոռացան իրանց խոստումը և մի
ծերունու պատահելով, սկսեցին ծաղրել նրան:
Այս բանը հօր ականջը հասաւ:

Միւս օրը հօր տօնն էր: Որդիքը եկան շնոր-
հաւորելու և առողջութիւն ու երկար կեանք
մաղթեցին նրան:

— Զաւակներս, — ասաց հայրը, — ես չեմ ցան-
կանում երկար ապրել. վախենում եմ, որ երբ
ծերանամ, չար մանուկները ծիծաղեն ինձ վրայ:

Երեխաները հասկացան, թէ ինչ է ուզում ա-
սել հայրը և սաստիկ ամօթից չըգիտէին ինչ ա-
նեն: Այս օրից նրանք այլ ևս չէին ծիծաղում
ծերունիների վրայ:

67. ՀԱՍՏՈՅԻ ԵՐԳԸ.

Ահա ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէ, քաշեցէք, սիրուն եղներ
Յառաջ տարէք արօրը:
Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հնձենք,
Յորեան դիզենք կալի մէջ:
Կըգայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կանցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունինք,
Երբ լիք լինի մեր հորը:
Դէ, քաշեցէք, սիրուն եղներ,
Շուտով վարենք արտերը
Թող չասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են չասօյի եղները:

68. ՍՏԱԽՈՍ ՀՈՎԻՒԾ.

Մի փոքրիկ հովիւ սովորութիւն էր արել խա-
բել իր ընկերներին, բարձր կանչելով՝ Գայլը ե-
կաւ, գայլը եկաւ:

Հովիւները գալիս տեսնում էին, որ գայլ չը-
կայ: Մի օր էլ այս հովի հօտի վրայ մի գայլ
յարձակւեց: Նա սարսափած սկսեց կանչել. «Գայ-
լը, գայլը եկաւ»: Ընկերները կտրծեցին թէ էլի
խաբում է, տեղերիցը չըշարժւեցան: Գայլը նրա
հօտի մէջ ընկաւ և պատառուեց ոչխարներին:

Լրացնել հետեւել բառերը. տերև, կեղ \times , պարզ \times ,
օձաձ \times , վառեցէք, սրեց \times ք, մորթեց \times ք, օրմ \times ջ,
զիւզամ \times ջ, մնամ \times ջ, ընա \times , սոված, մոլորա \times ,
բերեց, տւե \times խրատե \times , անհօտ, հ \times տարած:

69. ԼԵԼԻԱՐԻ ՍԱՐԸ.

Ծագում է մանուկ արել գարնան,
Կովկաս լեռների ձիւնի պատնէշից.
Զարթնում են մէկ-մէկ սարերն աննման,
Զմռան անվրդով քնի մշուշից:
Ահա Լալարի վիթխարի ուսին,
Բազմում է արփին թարմացած ոյժով,
Սարեր, հովիտներ իրար երեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձիւներն էլ ահա հալ ընկան,
Արտասւեց իսկոյն լեռների հսկան,
Եւ դալար հովիտ, և ժայռի կրծքեր
Արձագանք տալով վարուն են հնչում.
Զմռան փարախից հովւական երգեր
Զեփիւոի թևով սարերն են թռչում:
Ահա գարնան հետ և շարան-շարան
Դաշտավայրերից դէպի զով սարեր,
Չըգւեց սայլերի, ուղտերի քարւան:

70. Ա Ռ Ա Ի Օ Տ.

Սուաւօտ է: Գիւղացիք արդէն զարթել են այն
փոքրիկ թռչնիկի ձայնից, որ գալիս նստում է
տանիքների վրայ ու կանչում. «Լծէ, լծէ»: Նրանք
արդէն լծել են իրանց եղներն ու զոմէշները և
բաւական վարել են գետինը: Տների մէջ մատակ-
ներն ու կովերը կթել են: Ոչխարների հօտն էլ
դաշտումը մատաղ արօտներից արդէն մի քաղցր
նախաճաշ է արել: Տանտիկինն էլ կովերն ու հոր-
թուկներն է դուրս հանում:

Լրացնել հետեւել բառերը. օրա \times ար, կառա \times ա-
րիչ, մարդա \times արի, քաղաքա \times րի, զոմ \times շ, հր \times շ,
պատն \times շ, տանեցի \times , քաղաքացի \times , դրսեցի \times :

71. Հ Ա Տ Ի Կ.

Լոյսը բացւում է. շուտ արտը գնամ,
Պատոեմ սուր խոփով ես կուրծքը հողի.
Իմ սիրուն հատիկ, քեզ նրան պահ տամ,
Մինչև օրերը ամրան արկի:

Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ,
Թէ Աստւած ուզեց, դու կանաչեցիր,
Թող դարդս մեռնի գետնի տակ անհետ,
Դու ինձ միտթար կրկին տուն դարձիր:

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջն,
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարզեց մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ ինդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չըլինիմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ճակտիս արևառ,
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չըթողնեմ:

Ծլիր, կանաչիր, ոսկէ սաւանով
Ծածկիր իմ արտը ողջ ալէծածան,
Նոր այն ժամանակ անուշ շշիւնով,
Տուր ջարդւած սրտիս մի քուն հանգստեան:

72. Գ Ա Ր Ա Ւ Ի Ն.

Կոռւկները շարան-շարան մեր զլխով
Կոկրուալով ելան, անցան երկնքով.
Գարնւն, գարնւն աւետեցին միասին.
Լսեց, բացւեց ծիրան, սալոր, կեռասին:
Արտուտները ծրլւրլալով թռան վեր,
Չորից ելան կաքաւները դէպ' մարզեր.
Գալնան գալը ողջունեցին միաձայն,
Կըչկչալով օրներգ ասին բնութեան:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Ռ Ա Ռ Ե Վ Ե Տ Ե Ս Ո Վ Կ Ե Ն Ե Ր Ե Ց.

ԱՐՄԱՏ ԿԱՐ ՆԱԽԱՏԻԳ ԲԱՌԵՐ.

Ծեր, ծերուկ, ծերունի, ծերանալ, ծերակոյտ,
Տես, տեսիլ, տեսնել տեսարան, տեսուչ:

§ 1. Բառի այն մասը, որը անփոփոխ է մնում եւ
որի մէջ պարտնակւում է նրա զլխաւոր նշանակութիւ-
նը, կուտում է աշմատ (կօրու): Ծեր, տես - արմատ-
ներ են:

ԱԺԱՆՑԱԿԵՆ ԲՐԱԵՐ.

§ 2. Եօք աշմատ կամ նախատիպ քառերը սկզբից
կամ վերջից զանազան մասնիկներ են ընդունում, կոշտու
են ածանցական: (Օր. ան-սիրտ, տ-գէտ, գործ-իչ):

Եօք մասնիկը կամ ածանցը քառի սկիզբն է դրւուա,
կոշտում է նախադաս մասնիկ կամ նախածանց
(որեծտառակա). իսկ եօք քառի վերջն է դրւուա՝ յետա-
դաս մասնիկ կամ վերջածանց (ցցիցնուած):

Ն Ա Խ Ե Ծ Ա Ն Յ Ն Ե Ր.

§ 3. Նախածանցներ են՝ ան, ապ, չ, տ, դ.
Քացանական մասնիկները:

Անմայր, ապուշ չտես, տգէտ, դժգոհ,
անտուն, ապերախտ, չկամ, տկար, դժկամ,
անխելք, ապօրէն, չաստւած, տհաս, դժբախտ,
Նախածանցներ են նաև՝ արտ - արտաշնչել, ներ -
ներշնչել, բաղ - բաղաձայն, բաց - բացակայ, գեր - գերա-
պատիւ, դեր - դերանուն, ենթ - ենթակայ, համ - համամիտ,
մակ - մակագրել, յար - յարակից, ստոր - ստորագրել,
վեր - վերադարձ, տար - տարօրինակ:

ՎԵՐԱԾԱԾԽՆՑՆԵՐ.

§ 4. Գործողութիւն ցոյց տոտի գաղափար ցոյց
տոտիներ.

ան, եայ, իչ, ող.—իշխան, պաշտօնեայ, սափրիչ, լացող.
նակ, որդ, ու.—խօսնակ, նաւորդ, լուզորդ, ազդու, հատու.
ուն, պան,—այգեպան, դռնապան, սողուն, թռչուն:

Տեղի եւ ծագումի գաղափար ցոյց տոտիներ.
իա, նոց, ոց.—Անգլիա, Ֆրանսիա, հաւոց, գլորոց, ծաղկոց.
ստան, բան.—Հայաստան, բուրաստան, ննջարան, պահարան.
ցի, իկ.—Կարսեցի, Շուշեցի, լեռնցի, պարսիկ, ուսմիկ.
ական, ային.—գիւղական, գաւառական, դաշտային, օդային.
ենի, ւոր.—մայրենի, վայրենի, հոգեոր, մտաւոր, լուսաւոր.
եայ, եան.—առօրեայ, միամսնայ, արեկեան, աջակողմնան:

Իգականի գաղափար ցոյց տոտի վերջածանցներ.
ուհի, անոյշ.—վարժուհի, դիցուհի, Սիրանոյշ, Հրանոյշ.
դուխտ.—Սահնդուխտ, Շահնադուխտ:

Փոքրութեան կամ փաղաքական վերջածանցներ.
ակ, ուկի իկ.—նաւակ, դիակ, թռչնիկ, գառնուկ. (տ. եր. 27):

Իրենց մօտ նշանակած գաղափարները արտայայտող վերջածանցներ.

Եղէն, ենի, ի.—մսեղէն, նշենի, ինձուենի, կաղնի, դեղձի.
կան, բոր.—գումկան, վարձկան, տնւոր, զինւոր.

իք, չէք.—խաղալիք, ուտելիք, կաղանդչէք, զատկլչէք.
գոյն, գին.—մեծագոյն, վեհագոյն, ուժգին, թանկագին:

Ոննեցողի գաղափար արտայայտողներ.

անի, եղ, ի.—լեզւանի, գեղանի, համեղ, զօրեղ, մոլի, աղի.
աւետ, ոտ, ցի.—հոտաւէտ, աղտոտ, բորոտ, խելացի:

Վերջածանցներ են նաև.

պէս, բէն, բար—այսէս, հայերէն, ձրիաբար.

ովին, կիր.—խմբովին, բոլորովին, որոշակի.

ծու, լի.—շնծու, պահծու, խղճակի, ցաւալի:

ԲԵՐԴ ԲԱՌԵՐ.

§ 5. Այն բառերը, որ երկու արժատից են կազմած,
կոչամ՝ են բարդ բառեր (сложные слова):

Օրինակ. նաւ և վարել=նաւավար.

զօրք և հանդէս=զօրահանդէս:
Ցոյց տալ, թէ հետեւեալ բարդ բառերը ինչ արժատներից
են կազմւած:

Շուշեկառք, երկրագործ, նաւապետ, ջուփէժ,
ձկնորս, վայցառհատ, մոմավաճառ, ջրաման:

§ 6. Բարդ բառերում արժատները միանում են ա
տառավ, ուը կաշում է կապող կամ յօդակապ (coe-
dinationaia).

Զօր-ա-վար, ժամ-ա-ցոյց, ծով-ա-գնաց,
դաշտ-ա-վայր, լուս-ա-մուտ, լուս-ա-փայլ:

§ 7. Կան բարդ բառեր, որոնք առանց կապող
ծայնաւորի են բարդում:

Թանաք-աման, բար-օրութիւն, հաց-թուխ,
դաս-ընկեր, ազգ-օգուտ, ջըր-կիր.

Հետեւեալ երկու բառից մի բարդ բառ կազմել:
Հայ և վաճառել, խաղ և ընկեր, սուտ և խօսել
նաւ և վարել, նոր և վարժւել, ձրի և թոշակ:

ՀԱՅՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

§ 8. Եսք արժատ բառը վերջին վանկում բաղա-
ծայնից առաջ ի կամ ու է ունենում, ածանցման եւ
ռազդութեան ժամանակ ի, ու ծայնաւորները կամ ը
են դանում կամ դուքս են ընկնում:

գիծ—գըծել, սիրտ—սրտոտ, սուր—սրածեծ,
բժիշկ—բժշկել, միս—մասկեր, մուր—մրոտ:

Իսկ երբ արժատ բառը վերջանում է է, եա, եայ, ոյ,
է-ն փոխում է ի (օր. սէր—սիրել), եա դանում է ե
(օր. անկեալ—անկելանոց): Եայ դանում է է (օր. գործու-
նեայ—գործնէութիւն). ոյ դանում է ու (օր. յոյս—յուու):

ՆՈՅՆԱՆԻԾ ԲՐԱՄԵՐ.

§ 9. ՆՇՆԱՆ^ւ ասում են այն բառերը, որոնք աբասանովմեամբ տարրեր են, բայց նշանակութեամբ նոյնը. (Օր. այտ—թուշ, բուռ—ափ, շրթունք—պոօշ, պատուհան—լուսամուտ):

ՀՈՄԱՆԻԾ ԲԱՄԵՐ.

§ 10. Հոմանիշ (համանիշ) ասում են այն բառերը, որոնք նշանակութեամբ իրար նման են և միւսյա իմաստի նրբութեամբ են տարրերում միմանցից:

Ալիք, կոճակ, վէտ.
Աւարել, թալանել, կողոպտել, գողանալ, յափշտակել.
Հարուստ, ճոխ, փարթամ, մեծատուն.
Ճաւ, վիշտ, թախիծ, կոկիծ, տամշանք, չարչարանք.
Խումբ, գունդ, վաշտ, հօտ, զոհմակ, նախիր.
Պայծառ, յատակ, պարզ, մաքուր, ջինջ, ականակիտ:

ԲՅՋՄԱՆԻԾ ԲԱՄԵՐ.

§ 11. Բազմանիշ ասում են այն բառերը, որոնք մի բանի նշանակութիւնն ունին:

Այր—մարդ, այր—քարայր, քարանձաւ.
Այս—սա, այս—չար ողի.
Բարակ—նուրբ, բարակ—որսի շուն.
Կաթ—կոփի կաթ, կաթ—ջրի կաթիլ.
Կուշտ—ես կուշտ եմ, կուշտս ցաւում է.
Մարտ—մարտ ամիս, մարտ—պատերազմ:

ՀԱԿԱՆԻԾ ԲԱՄԵՐ.

§ 12. Հականիշ ասում են այն բառերը, որոնք հակառակ նշանակութիւնն ունին:

Տաք—ցուրտ, գեղեցիկ—^ո, խելօք—^ո.
մեծ—^ո, հաստ—^ո, թեթի—^ո.
սուր—^ո, երկար—^ո, արագ—^ո:

Ա Բ Ա Ր Կ Ա Յ.

§ 13. Այն ամենը, ինչ ոք ձանազում ենք արտարին զգայականքներով՝ տեսողութեամբ, լսողութեամբ, հոտառութեամբ, ձաշակելիքով և չօշափողութեամբ, կոչեռում են տարրեայ (որեծութեայ). Օր. սեղան, ձայն, հոտ, ցուրտ:

Գրեցէք, ի՞նչ էք տեսնում գպրցում, տանը, գաշտում, այգում, պարտիզում, փողոցում, եկեղեցում:

Ի՞նչ ենք ուտում, խմում կամ հագնում: Ի՞նչ են շինում երկաթից, կաւից, ոսկուց, արծաթից, պղնձից, քարից:

§ 14. Կան տարրեաներ, որոնք ինացւում են մորով (օր. յոյս, պատիւ):

Արտագրել նախ արտաքին զգայարանքներով ձանաչած տարրեաները (նիւթական) և ապա մաքով իմացածները (մտաւոր):

73. Զի, արծիւ, ցաւ, ծառ, գիրք, վիշտ, հաց, բարութիւն, մարդ, ոչխար, գործ, խնձոր, ուռենի, պատիւ, աղ, սեղան, յոյս, կացին, կոփ, ուրախութիւն, արև, լուսին, պատիւ, սոխակ, առաւոտ, նարօտ, արտօնութիւն, այգի, ծուլութիւն:

Պատասխանել իւրաքանչիւր հարցին մէկ բառով:

Ո՞վ է մլաւում: Ո՞վ է կարզում: Ո՞վ զնաց: Ի՞նչը կոտրեց: Ի՞նչը վայր ընկաւ: Ո՞վ է լալիս: Ո՞վ է երգում: Ի՞նչն է հոսում: Ո՞վ է վազում: Ո՞վ է աղօթում: Ի՞նչը պատառեց:

§ 15. Առարկայի համար կարելի է հակց տաշ հիվ, ի՞նչ:

Իւրաքանչիւր առարկայի մասին գրել, ի՞նչ է (՞վ է):

74. Արջը (արջը գաղան է). էշը, առիւծը, հաւը, սոխակը, Արամը (՞վ է. Արամը իմ եղբայրն է). մեղուն, մըջիւնը, վարդենին (թուփ է). խնձորը, բալը, բալենին, կաւը, աղը, երկաթը (մետաղ է). ոսկին, արծաթը, օձը, տառեխը (ձուկ է). վարդը, շունը, երասխը, Մասիսը, Երևանը, Քանաքեռը:

ՃՆՉՈՒՈՐ ԵՒ ԱՆՁՈՒՆՉ ԱՌՅՈՒԿԱՆԵՐ.

§ 16. Առարկաները լինում են կինդանի, շնչառոր (մարդ, ձի, մըջիւն) եւ ամիսնուան, անցունէ (գիրք, սեղան):

Արտագրել նախ շնչառոր և ապա անշունչ առարկաների անունները:

75. Հաւ, նաւ, կով, ժողով, կողով, ծառայ, փեսայ, քեչայ, չուխայ, Աննա, Եւա, Սինա, երեկոյ, առաւօտ, Սաքօ, Համօ, աղւէս, պարտէզ, գոմէշ, արծիւ, յովագ, յոյս, պատնէշ, մանուկ, մեղու, քար, բգէզ, կօշկակար, կօշիկ, ոչխար, մօրուօ:

§ 17. Քնչառոր առարկանիրին նարց ևն տաշի նվ, անշունչներին՝ ի՞նչ:

Արտագրել և կէտերի տեղ գնել նվ կամ ի՞նչ:
76. Ուսուցիչը գրում է (նվ): Մեղանը կլոր է (ի՞նչը): Աշակերտը երգում է (...): Գիւղացին վարեց (...): Ազօթարանը բացւեցաւ (...): Ծիտը ծառին ծըլւըլում է (...): Մանուկը խաղում է այգում (...): Սայլը ճոռում է (...): Ծիծեռնակը բոյն է հիւսում (...): Գնդակը կլոր է (...): Միմէօնը արօտում վրօնում է (...):

Իւրաքանչիւր բառին տալ յարմար առարկայ:

77. Բառաշում է (նվ). խրխնջում է (նվ). կանչում է (նվ). հալչում է (ի՞նչը). երգում է (նվ). խօսում է (նվ). հոսում է (ի՞նչը). պատմում է (նվ). քնած է (նվ). ներկած է (ի՞նչը). ուրախ է (նվ) բարձր է (ի՞նչը). տիսուր է (նվ). ծանր է (ի՞նչը):

Ասէք այն շնչառոր առարկաները, որ կարելի է տեսնել տանը, գոմում, անտառում, ծովում:

Ասէք այն անշունչ առարկաները, որ կարելի է տեսնել տանը, դպրոցում, բանջարանոցում, այգում, անտառում:

Անւանեցէք այն առարկաները, որոնք թոչում են, լողում են, սողում են, ստոսառում են, քայլում են:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ.

§ 19. Անձն մի առարկայ ունի իր անունը: Առարկայի անունը կուտում է անուն կամ գոյական անուն (սոյլ շահետառություն):

Անունները լինում են յատուկ (собственныя) (տես եր. 28) եւ հասարակ (народные). Այս անունը, որ տրում է քողոր միանման առարկաներին, կոչում է հասարակ կամ հասարական:

Ցոյց տալ յատուկ և հասարակ անունները:

78. Սուրէն, տղայ, Գէորգ, Միմէօն, քաղաք, գետ, Երասխ, Արածանի, գիւղ, Անի, ծով, Եվրատ, Երևան, գիւղաքաղաք, Աղէքսանդրապօլ, Ախուրեան, վանք, Էջմիածին, շաքար, Յարէթ, գիւղացի, Բիւրական, սար, Արագած, Սեպուհ, կացին, Նպատ, Շուշի, Նուխի, արծիւ, Ասլան, Բաթում, Երուսաղէմ, Գողգոթա:

Ա Ն Ի Ա Ն Թ Ի Ի Ը:

§ 19. Անունները ունին նրկու թիւ. եղակի (еди- ստվենու) եւ յոգնակի (множественное): Եղակին ցոյց է տալիս մի առ սրկայ (օր. ծառ, խոզ), իսկ յոգնակին՝ մէկից աւելի (շատ) առարկայ (ծառեր, խոզեր):

եղակի թ.	Յոգնակի թ.	Եղ. թ.	Յոգն. թ.	Եղ. թ.	Յոգն. թ.
սար—	սարեր,	առու—	առուներ,	վրան—	վրաններ,
ծառ—	՝,	ծաղիկ—	՝,	թռչուն—	՝,
քար—	՝,	քաղաք—	՝,	գաղան—	՝,
փայտ—	՝,	պարտէղ—	՝,	աւագան—	՝,
դաշտ—	՝,	այգի—	՝,	անասուն—	՝,
հաւ—	՝,	հովիտ—	՝,	գերան—	՝,
եղակի թ.	Յոգնակի թ.	Եղ. թ.	Յոգն. թ.	Եղ. թ.	Յոգն. թ.
տղայ—	տղաներ,	տղայ—	տղէք,	գերի	գերիք,
փեսայ—	՝,	երեխայ—	՝,	եկեղեցի—	՝,
հսկայ—	՝,	աղջիկ—	աղջիկը,	քաղաքացի—	՝,
կաթսայ—	՝,	քահանայ—	քահանէք,	գիւղացի—	՝,

Գրեցէք եղակի թւով.

Արօներ--արօր, թռչուններ—՝, հսկաներ— հսկայ,
բգեներ—՝, կռաններ—՝, խարերաններ—՝,
դայլեր—՝, նշաններ—՝, սրիկաններ—՝,
կովեր—՝, սահմաններ—՝, առարկաններ—՝,
հանդէմներ—՝, արձաններ—՝, ծառաններ—՝.
Գրեցէք եղակի թւով.

79. Սագերը թռչում են: Թռչունները ուրախ
ճռւղում են ծառերի վրայ: Շները խաղում են:
Ծառերը և ծաղիկները ծաղկել են: Գիւղացիք
աշխատում են դաշտերում: Զկնորսներն իրանց
ուռկաններն են քաշում: Հնձողներն հնձում են
արօտները: Դարբինները երկաթ են ծեծում:
Աշակերտները խաղում էին պարտիզում: Տիկին-
ներ, բանւորներ, պառաւներ, աղախիններ խոնր-
ւած, կանգնած էին դպրոցի դռանը:

80. Ա զ Ո Ւ Ն.

Աշնանային քամինները փչեցին,
Ծառ, ծաղիկներ տերևները թափեցին,
Երկինք մոայլ գիշեր-ցերեկ ամպամած,
Սարեր, ձորեր մէզ մառախուղ է պատած:

Ամայացան անդաստաններ, այգիներ,
Թռչունների ուրախ երգը դադարեց,
Խոպանացան աղմկալից ճամփաններ,
Եւ սայլերի անցուղարձը դադարեց:

Յոգնած եղներն հանգստացան գոմերում.
Օջախի շուրջ գեղջուկները խմբւելով,
Աշխատանքի պտուղներն են վայելում,
Ուրախ-զւարթ, մինչև գարուն ապահով.

81. ԳԻՒՂԱԿԱՆ ԸՆԾԱՆԻՔ.



Ր Ա Ֆ Ֆ Ի Ռ

շուրջը, ընդհանուր շարժողութեան մէջ են: Տու-
նը՝ լցւած կերակուրների անուշահոտ շոգիով՝
ներկայացնում էր մի ահագին խոհանոց, որտեղ
տեսնողը կը կարծէր, թէ ճաշ է պատրաստում,
մի ամբողջ բանակ կերակրելու համար: Եւ յիրա-
ւի, բացի ծերունու ահագին գերդաստանից, նրա
սեղանից կերակրւում էին բազմաթիւ հովիւներ,
մշակներ իրանց ընտանիքներով, որոնք ծառայում
են նրա տանը: Ամեն օր վառւում են նոյն թո-
նիրները, ամեն օր պատրաստում է նոյնչափ
կերակրւներ: Եւ ծերունու ժրածան հարսները
ոչ մի րոպէ հանգստութիւն չունին:

Ահա այնտեղ, բագում, հարսներից մէկը կո-
վերն ու ոչխարներն է կթում. միւսը օջախի վրայ
կաթ է տաքացնում՝ մածուն շինելու համար. եր-
բորդը պանիր է մակարդում. չորրորդը հարում է
խնոցին՝ կարագ պատրաստելու համար: Նրանց
շուրջը վազվում են բազմաթիւ երեխաներ և
խաղում են նորածին գառների ու նորթերի հետ:

Յ. Մելիք-Յակովիսան (Րաֆֆի).

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ. Օ-ով վերջացող յատուկ անունների
վերջում օ է գրւում. Խաչօ, Կարօ, Համօ, Մկօ:

ՀՈՂՈՎՈՒՄ.

§ 20. Անունները, նայած թէ ինչ հարցի ևն պատասխանում, փոխում են իրանց վերջաւորութիւնը. օր. **Փողոցը** (ի՞նչը) լայն է: **Փողոցի** (ի՞նչի) երկարութիւնը մի վերսու է: Ես դուրս եկայ փողոց (ո՞ւր), կամ մշակները մաքրում են փողոցը (ի՞նչը): **Փողոցով** (ի՞նչով) մարդիկ են անցնում: **Փողոցից** (ի՞նչից) ձայներ է գալիս: **Տղայքը** խաղում էին փողոցում (ի՞նչում):

Անունների վերջաւորութեանց փոփոխումը կոչում՝ է հոլովում (ռելունել). Ամեն մի փոփոխած ձեւ՝ հոլով (ուժութեան):

Հոլովերը եօթն են.

Ուղղական (սահմատուան), **սեռական** (բօնութեան), **տրական** (ծառանուն), **հայցական** (աստեան), **բացառական**, **գործիական** (տօրութեան), **ներգոյական** (ործոլոյան—ու Յորիշ շնո՞ւ):

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈՂՈՎ.

§ 21. Ուղղականը խօսքի մէջ պատասխանում է նիվ, ի՞նչ հարցերին:

82. **Փայլուն արել** (ի՞նչը) արդէն մայր մտաւ, լուսինն էլ վաղուց գնաց, թաք կացաւ: **Պապը** (ո՞վ) սաստիկ ծերացել էր: Նրա աչքերը լաւ չէին տեսնում, ականջները ծանրացել էին, նրա ծեռներն ու ոտները դողդողում էին: **Գուրգէնը** դէպի փողոց էր նայում, տեսաւ, Բօղաբը տաքանում էր արեի տակ:

ՍԵՐԱԿԱՆ ՀՈՂՈՎ.

§ 22. **Սեռական** հոլովը խօսքի մէջ պատասխանում է հում, ի՞նչի հարցերին: **Սեռականը** ցոյց է տալիս, թէ մի առարկայ ում է պատկանում: (օր. **Սարի գագաթ**, **ձկան իւղ**, **մօր անուն**):

ԱՐՏԱԳՐԵԼ և սեռականի տակ գիծ քաշել.

83. **Գետի եզերքին**, ծառերի տակին ապրում էր տղան իր սիրող մօր հետ: **Սարի լանջին**, մէզի միջում խոխոջում է ջուրը, վշշում: **Գիշերւայ** մութը աշխարհս պատեց, և աշնան պաղ-պաղ, ցուրտ քամին փչեց: **Զաւէնի գլխի մազերը** երկար են: **Դպրոցի գուան** առաջ մեծ բազմութիւն էր հաւաքւած: **Մեր տանտիրոջ** ծառայի անունը կարապետ է: **Առաւօտեան** արշալոյսի ծէգը բացւելուն պէս, լսեց մեր հօտաղների ձայնը:

Լրացնել խօսքի մէջ հարկաւոր բառերը.

Մեր հարեւան.. որդ.. անունը Գուրգէն է: Ծառան իր տիր.. համար հաւ.. ձագեր գնեց: **Մկ.. պոչը երկար է:** Այսօր օրւ.. մեծ մասը ամպամած էր: Իմ քր.. անունը Աշխէն է: **Դաշտեր.. վրայով անցնում էր թռչուններ.. երամը:** Աշնանը ծառեր.. տերմները թափւում են: **Զկ.. իւղը օգտաւէտ է:**

ՏՐԵԿԱՆ ՀՈՂՈՎ.

§ 23. Տրական հոլովը պատասխանում է հումը, ի՞նչին, որտեղ, երբ հարցերին:

Արտագրել և տրական հոլովերի տակ գիծ քաշել:

84. **Մենք արժանացանք** ուրախ մայիսին (ի՞նչին): **Ծերունին** ասաց պառաւին, որ տանը (որտեղ) մնայ: **Աղէսն** ասաւ պառաւ տատին. «**Մտիկ չեմ տայ ձեռիդ փէտին,** կարօտել եմ թըփիկ ճուտին»: **Աղէսն** եկել—նստել դէզին, երկար պոչը ծռել վզին, աչք է ձգել մեր աքլորին: **Դեղնած դաշտերին իջել է աշուն:** Հայրը մի գիրք ընծայեց Ներսէսին: **Ամպը եկաւ նստեց սարին,** նըստեց սարի սուր կատարին: **Արևն յաղթեց ամպերին,** շողքը զցեց սարերին: **Ինքդ քեզ օգնող եղիր:** Շունը պառկել էր դունը:

ՀԱՅՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

§ 24. Հայցական հոլովը պատասխանում է հում, ի՞նչ, հուր հարցերին:

Սրտագրել և հայցական հ.-ի տակ գիծ քաշել:

85. Աշնան վերջին քամին եկաւ, սրբեց զաշտեր (ի՞նչ), ձոր ու լեռ (ի՞նչ): Մայրը սիրում է իր երեխային (հում): Ծերունին անտառ (հուր) գնաց: Ես տեսայ նրա հօրը: Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին: Ստեղծողն իր առատ ձեռքը բաց արեց, արտեր, անտառներ հարստացրեց: Գայլն ստէպ-ստէպ շուրջը նայելով իջաւ ձորը, որտեղից հոսում էր գետակը ջրվէժներ և ջրընկեցներ կազմելով: Անտառը մատակարարում է գայլին սղէս, ողնի, թռչուններ, սողուններ ու բուսեղններ: Գայլը սիրով ուտում է՝ ոչխար, այծ, ձի, խոզ, շուն, սագ, բադ, հաւ և ուրիշ կենդանիներ:

ԲԵՅԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ.

§ 25. Բացառական հոլովը պատասխանում է հում-նից, ի՞նչից, հրտեղից հարցերին:

Սրտագրել և բացառական հոլովի տակ գիծ քաշել:

86. Ծագում է մանուկ արել գարնան, կովկաս լեռների ձիւնի պատնէշից (հրտեղից), զարթնում են մէկ-մէկ սարերն աննման, ձմրան անվրդով քնի մշուշից (ի՞նչից): Գիւղացին չգիտէր, ինչպէս պահպանէր իր այգին անիրաւ ագռաւններից ու սրիկայ ճնճղուկներից: Մարդը տեսաւ, որ զուրկ միաց արդիւնքից՝ ոխը հանեց տխմար իշի կռնակից: Շուտով նախիրն հանդից կըգայ: Մանուկ օրից շատ եմ տեսել և փոթորիկ և աղէտ: Վտակը ժայռից ներքեւ է թռչում:

Ուկի արել փայլէ քեզ վերէն, կենսարեր հովը փչէ ի լեռն: Նա անձրեւ ցողէ առատ ի վերէն: Արդեօք դու (գարուն)

ինչ բախտ բերիր ինձ Տէրէն: Սարէն կուգայ ձիւտոր: Վարոսը գիւղէն եկաւ:

ԳՈՐԾԻԸԿԱՆ ՀՈԼՈՎ.

§ 26. Գործիական հոլովը պատասխանում է հում-նով, ի՞նչով, հրտեղով հարցերին:

Սրտագրել և գործիական հոլովի տակ գիծ քաշել:

87. Կանաչ տերեռով (ի՞նչով) ծառը ծածկւեց, եւ կոկոններով քնքոյշ հագնըւեց:

Կենսատու ցօղով մարգարտանման,
Ուռանում է նա շնչովը գարնան:

Իմ տիկինը կերակրում է ինձ շաքարով, նշերով, իմ վանդակը զարդարում է իր քնքշիկ ձեռներով: Ու մուրհակով, շահով, կարգով, փող վեր առան բաւականին: Կապոյտ երկնքով ամպեր են անցնում: Մայր Արաքսի ափերով, քայլամոլոր գնում եմ:

ՆԵՐԴՈՅՑԿԱՆ ՀՈԼՈՎ.

§ 27. Ներզայականը պատասխանում է հրտեղ հարցին:

88. Աղատ շրջում են հօտերը զաշտում, աղատ լողում են ձկները ծովում: Արտերում հաբուստ ցանքսերը հասան, զաշտերում գերանդին սկսու փայլել և անտառներում թռչնակներ երգել. «Ինչքան սիրուն է այս ստեղներում, եկ, հանգստացիր, մանկիկ, հովերում»:

Ցոյց տալ հոլովերը.

Եշը ձանձրացել էր աշխատելուց: Նա փախաւ իր տիրոջից և ճամփին գտաւ առիւծի մորթի: Փաթաթւեց առիւծի մորթով և սկսեց անտառում զրունել: Բոլոր գաղանները նրան ընդունում էին առիւծի տեղ և ահով-գողով փախչում էին: Շուտով էշը ուզեց գւարճանալ և սկսեց զռալ: Հէնց որ գաղանները լսեցին այդ զաղոսցը, իսկոյն հասկացան բանի զօրութիւնը և սկսեցին ոխը հանել էշից: Շուտով վրայ է հասնում տէրը և աղատում ականջեղ անտառնին:

ՀՈԼՈՎՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ.

	Ե	Գ	Ա	Է	Ւ	Ւ.	Օպհակի.
	Ե հոլով.	Ու հոլով.	Ան հոլ.	Լայ հոլ.	Ոջ հոլ.	օր հոլ.	
Թւղգ.	քար	ձի	նոռու	օր	տէր	հայր	քարեր *
Մեռ.	քարի	ձիու	նոռան	օրւայ	տիրոջ	հօր	քարերի
Տը.	քարին	ձիուն	նոռան	օրւան	տիրոջը	հօրը	քարերին
Հայց.	քար	ձիուն	նոռու	օր	տիրոջը	հօրը	քարեր
Բաց.	քարից	ձիուց	նոռից	օրւանից	տիրոջից	հօրից	քարերից
Դորձ.	քարով	ձիով	նանով	օրով	տիրոջով	հօրով	քարերով
Ներգ.	քարում	ձիում	նանում	օրում	տիրոջում	հօրում	քարերում

* Այսպէս կազմում են միւս հոլովերի յոգնակին:

ի. Հոլ. այսպէս են հոլովում անունների մեծագոյն մասը.

ուշայի են հողովում այն անոնները, որոնք ուղղակիում ի ունին. (օր. գօտի, ոսկի... նաև Աստւած, սէր —սիրու).

ԹԱՆ. այսպէս հոլովեռմ են. բռւռ, դռւռ, կռւռ, ձռւկ, մուկ, լեռ... նաև ում, ուն, ութիւն վերջացող բառերը. (օր. բարոթիւն, արփւն, շուն, տուն, ուսում, զգացում).

ւայ. այսպէս հոլովեռմ են ժամանակի անունները. (օր. տարի, ամիս, շաբաթ).

ոյն այսպէս հողովում են. տանուտէր, հողատէր, քոյր,
կին, հօրաքոյր, ընկեր.

օր. այսպէս հոլովում են, կնքահայր, վահահայր, տիրամայր, եղբայր, հօրեղբայր:

Հին Հոլովակը Զեհեր.

<i>Աւզուած.</i>	<i>Վահան</i>	<i>Իտալիա</i>	<i>յոյս*</i>	<i>կայսր</i>	<i>գալուստ</i>
<i>Սեռ. Տր.</i>	<i>Վահանայ</i>	<i>Իտալիոյ</i>	<i>յուսոյ</i>	<i>կայսեր</i>	<i>գալստեան</i>
<i>Բայց.</i>	<i>Վահանից</i>	<i>Իտալիայից</i>	<i>յոյսից</i>	<i>կայսրից</i>	<i>գալստից</i>
<i>Քողմ.</i>	<i>Վահանով</i>	<i>Իտալիայով</i>	<i>յուսով</i>	<i>կայսրով</i>	<i>գալստով</i>

* Յողնակին կազմւում է ինչպէս քարեր, քարերի...

Եզակի գործ. ամբ, սու, իւ վերջանում էն՝ մասամբ, ան-
ձամբ, լիիւ.

Յոզին, ուղղ, ը վերջանում էն՝ որդիք, տղայք, կանայք,
ծաղկունք.

Յոդն, սեռ, *wg*, *hg*, *ng*, ռուսաց, պարսից, հայոց:



Դ. ԱՂԱՅԵՎՆ.

* * *

- Ատքիդ տակին վարդեր
բացւին,
Զորս կողմդ փռւի մանուշակ,
Բարով համնես քո մուրազին,
Գլխիդ տեսնեմ թագ ու պսակ:
Քո ժպիտը վարդի նման,
Արտասուքդ՝ մարգարիտի,
Ուր որ գնաս՝ Աստւած քեզ
հետ,


Քո խրճիթը պալատ դառնայ,
Ողջ սիւները՝ անզին քարից,
Պատ ու յատակ՝ ոսկի արծաթ,
Առաստաղը՝ գոհարներից:

2. Աղայեան.

90. Գիշեղի գրւդէցլ.

Իր որդուց մայրը նամակ ստացաւ,
Կարօտած սիրտը վեր ու վար եղաւ:
Որդին հեռու էր, օտար քաղաքում,
Ծառայում մի տան, դպրոցում սովորում:
Նայում է թղթին, սիրուն նշաններ,
Բայց այդ գրերի միտքը չըգիտէր:
Դուրս եկաւ փողոց, մի քարի նստեց,
Գիւղի տէրտէրի որդուն հանդիպեց
Եւ նրան կանչեց.—Տէրտէրի տղայ,
Մօտս եկ, ապրես, այս գիրը կարդա:

Արացնել հետևեալ բառերը. տպ~~×~~տ, հնարագ~~×~~տ,
պարտատ~~×~~ր, կոչնատ~~×~~ր, խոնա~~×~~, արշա~~×~~:



Վ. Ս. ՏՈՒՐԴԵՆԴ.

91. ՄՈՒՐԱՅԿԱՆ.

Ես անցնում էի փողոցով... ինձ կանդնեցրեց մի ծեր, հալից ընկած մուրացկան։ Նա աղբատութիւնից հիւծւած ու մաշւած էր երևում։

Նա ինձ պարզել էր իր ուռած ու կեղտերով. ծածկւած ձեռքը... Նա խեղւած ձայնով ողորմութիւն էր աղերսում։

Գրպաններս սկսեցի

տակն ու վրայ անել... Բան չգտայ — ոչ փող, ոչ ժամացոյց, ոչ էլ նոյնիսկ թաշկինակ... Իսկ մուրացկանը շարունակ սպասում էր... և նրա կառկառած ձեռքը թոյլ կերպով երերւում ու ցընցւում էր։

Ինքս ինձ կորցրած, շփոթւած, ես ամուր սեղմեցի այդ գողդոջուն, այդ կեղտերով ծածկւած ձեռքը... «Թողութիւն արա, եղբայր, ես ոչինչ չունիմ»։

Մուրացկանն իր կարմրատակած աչքերը յառեց վրաս։ Նրա կապտած շրթունքները քմծիծաղ տւին, և նա էլ իր կողմից պինդ սեղմեց իմ սառած մատները։

«Էհ, ինչ արած, եղբայր, — ծամծմեց նա. — զբա համար էլ շնորհակալ եմ. այդ էլ մի ողորմութիւն է, եղբայր»։

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից։

Տուրգենեվ.

Յ Օ Դ.

§ 28. Յօղը երեք տեսակ է. որոշիչ, անորոշ, դիմորոշ։

Ո Ր Ո Շ Ի Հ Յ Օ Դ.

§ 29. Որոշիչ յօղեր են՝ ը, ն. (օր. ծիտը, դուռն)։

§ 30. 1. Ը գործ է ածում, երբ բառը բաղաձայնով է վերջանում. (օր. սագը; բագը)։

2. Ը գործ է ածում, երբ բառը վերջանում է յով, որը կարգացում է. (օր. հայը, ճայը, թէյը, բայը)։

§ 31. 1. Ն որոշիչ յօղը գործ է ածում, երբ բառը վերջանում է ձայնաւորով. (օր. մեղուն, որդին)։

2. Երբ բառը վերջանում է համը յով, յ-ն ջնջում է եւ ապա աւելացում է ն։

Ծառայ — ծառան, փեսայ — փեսան.

Երեկոյ — երեկոն, տղայ — տղան։

3. Ն գրւում է բաղաձայնով վերջացող բառերից յետոյ, երբ յաջորդ (եկող) բառը ծայնաւորով է սկսում. Օր. Ամառն անցաւ. Աշունն եկաւ. Սուրիկը արցունքն աչքերին մօտեցաւ մօրը։

§ 32. Անորոշ յօղն է մի. (օր. Մի մարդ կար. մի ժամանակ. եկաւ մի օր ձմրան մտին)։

Դ Ի Մ Ո Ր Ո Շ Յ Օ Դ.

§ 33. Դիմորոշ յօղեր են՝ ս, դ, ն. դմւում են բառավերջում եւ երեք տեսակ են.

Անձնական. — անձ (ղէմը) ցոյց տողներ. (օր. խեղճա - ես խեղճ, խեղճդ - դու խեղճդ, խեղճն - նա խեղճը. յիմարս, յիմարդ, յիմարն)։

Ցուցական. — անձ կամ իր ցոյց տող. (օր. գիշերս — այս պիշեր, տեղդ — այդ տեղը, շաբթուս — այս շաբթաթւայ, երկիրս — այս երկիրը)։

Ստացական. — ցոյց է տալիս, մի բան ոմա՞ է պատկանում. (օր. գիրքս — իմ գիրքը, գիրքդ — քո գիրքը)։

Ա Ժ ԱԿԱՆ ԱՆՌԻՆ.

§ 34. 1. Այն քառերը, որոնք գործ են ածւում՝ միշտ անունների հետ եւ որոշում՝ են նրա յատկութիւնը՝ ծեւը, գոյնը, մեծութիւնը, քանակը, ինչ նիւթից լինելը՝ կամ՝ որնէէ հանգամանքը, կոչում՝ են ածական անուն (սույն որուագաւուու)։

2. Ածականը ընդհանրապէս միշտ անուններից առաջ է դրտւմ։ (օր. բարի մարդ, ծոյլ տղայ)։

3. Ածականները հինգ տեսակ են. որակական, յարաբերական, թւական, ցուցական և անորոշ։

ՈՐԱԿԱԿԱՆ ԾԾԱԿԱՆ.

§ 35. Որակական ածականը ցոյց է տալիս անսան որպիսութիւնը (բաւետօ) եւ պատասխանում՝ է նրպիսի, ինչպիսի հարցերը։

Գիծ քաշեցէք որակական ածականների տակ։

92. Նոր գիրք. լայն գետ. բարձր ծառ. նեղ ուղի. պայծառ լուսին. խորամանկ աղւէս. հոտաւէտ ծաղիկ. ազահ գայլ. հաւատարիմ շուն։

Պայծառ արել մտաւ մութ ամպերի տակ։ Զար գայլը յօշոտեց յիմար ոչխարին։ Սրատես շունը տեսաւ վախկոտ նապաստակին։ Խորամանկ աղւէսը տարաւ գէր վառիկներին։

Անւան մօտ գրէք յարմար որ-կան ածական։

93. Աշակերտ (նրպիսի). գնդակ (ինչպիսի). գետ... փողոց... ծաղիկ... դաշտ... անտառ... զետակ... արջ... նապաստակ... կատու... շուն... օր... արել... լուսին... աղւէս... ամառ... աշուն... Որ-ական ածականի մօտ գրէք յարմար անուն։

Բարի... ջանասէր... ծոյլ... խելօք... յիմար... չար... ազահ... կապոյտ... կարմիր... բարձր... խիտ... թափանցիկ... նեղ... լայն... չարքաշ... տգէտ... մաքուր... կեղտոտ... կեղտոտ...

§ 36. Որակական ածականը երեք աստիճան ունի. (շեղուացուուն), դրական (ուղարկուուն), բաղդական (ցրաւուուն), գերադրական (ուղարկուուն)։

1. Դրական աստիճանը ցոյց է տալիս առարկայի յատկութիւնը, առանց համեմատութեան միւս առարկաները հետ. (օր. մեծ մարդ, խեղճ տղայ)։

2. Բաղդակական աստիճանը ցոյց է տալիս թէ ունետէ յատկութիւն մէկ առարկայի մէջ աւելի է կամ պակաս միւսից. (օր. մեծագոյն կամ աւելի մեծ)։

3. Գերադրական աստիճանը ցոյց է տալիս, թէ մի առարկայի իր յատկութեամբ զնրազանց է իր նման սուրբ առարկաներից. (օր ամենալաւ. ամենագեղեցիկ, չափազանց բարի, սաստիկ մեծ)։

ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԾԾԱԿԱՆ.

§ 37. Յարաբերական ածականները ցոյց են տալիս թէ մի քան ում է պատկանում. ինչից է շինւած (նիւթը). որ տեղի և ժամանակւայ է. նրանք պատասխանում են՝ ում, որի, ինչէ որ ժամանակւայ։

Յարաբերական ածականների տակ գիծ քաշեցէք։

94. Գիւղացու խրճիթ (ում)։ Փայտէ սեղան (ինչէ)։ Գարնան ծաղիկ։ Զիու սմբակ։ Զմրան օր։ Ծառի արմատ։ Արծւի կտուց։ Թուչնի բոյն։

Փշեց աշնան քամին և ծառերի տերենները պոկեց։ Կարկուար փշացրեց զիւղացու արտը։ Մեր հարևանի որդին հիւանդ է։ Մեր տան պատերը բարձր են։ Ամառւայ փուշը, ձմեռւայ նուշը։ Մենք պողպատեայ կացին ունինք։ Եկեղեցում ոսկեայ և արծաթեայ անօթներ կան։ Սարի լանջին, մէզի միջում խոխոջում է ու տրտնջում ջուրը բարակ, ջուրը տխուր։



95. Ե Ր Ա Զ.

Ես լսեցի մի անուշ ձայն,
Իմ ծերացած մօք մօտ էր,
Փայլեց նշոյլ ուրախութեան.—
Բայց ափսոս, որ երազ էր:
Կարկաչառա աղբիւրն այստեղ
Թաւալում է սաբգարիտ,
Նա յատակ էր որպէս ըիւրեղ
Այս երազ էր ցնորամիտ:
Եւ մեղեղին տիսուր մայրենի
Յիշեց մանկութեան օրեր,
Մօրս համբոյրն ես զգացի
Այս, ափսոս, որ երազ էր:

Ս. ՇԱՀԱԳԻՉ.

Ս. ՇԱՀԱԳԻՉ.

ԹԻԱԿԱՆ ԸԺԱԿԱՆ.

§ 38. Թւական ածականները ցոյց են տալիս առարկայի թիւը կամ կազզը (ուրլուկ): Նրանք կոչում են նաև թւական անուն (ուր պալութեանու):

Թւական անունները պատասխանում են Քանի, Իրքան, Իրերորդ հարցերին:

Կէտերի տեղ գնել յարմար հարցեր.

96. Մէկ ժամ (Քանի). առաջին օր (Ո՞րերորդ). Երկու տարի (...) Երկրորդ ամիս (...) Երրորդ աշակերտ (...) Երեք հաւ (...) հինգ ընկեր (.) Կէտերի տեղ գնել յարմար թւական անուն.

97. Ես նստած եմ (ո՞ր) նստարանի վրայ:
Մեր դասարանում ... աշակերտ կայ: Եղբայրս
... դասարանումն է: Ամառը տարւայ ... եղանակն է: Սուրէնը բոլորեց ... տարին: Աշխէնը
մտաւ ... տարին: Յունւարը տարւայ ... ամիսն
է: Տարին ունի ... ամիս, ամիսը ... օր օրը ... ժամ:

ՑՈՒՑԱԿԱՆ ԵՒ ԱՆՈՐՈՇ ԸԺԱԿԱՆՆԵՐ.

§ 39. Ցուցական ածականներն են. այս, այդ, այն. (օր. այս մարդը, այն տունը, այդ տղան):

1. Ցուցական ածականից յետոյ եկող անունը ը կանչ նորոշիչ յօդը կառնէ (օր. այս կինը, այն երեխան):

Անորոշ ածականները տպարտամ եւ անորոշ իմաստ են տալիս գոյականին:

Անորոշ ածականներ են. ամեն, բոլոր, մի քանի, իւրաքանչիւր, ուրիշ, միևնոյն, այսինչ, այնինչ, որևէ, այսպէս, այնպէս, այսքան, որքան, որչափ:

§ 40. Ըծական անունները ոչ թիւ ունին, ոչ հոլով եւ յօդ չեն առնում:

Օր. Ուղ. հ. բարի տղայ, բարի տղաներ,

Ս. Տ. բարի տղայի (ն) բարի տղաների (ն)

Բ. բարի տղայից * բարի տղաներից,

Գ. բարի տղայով բարի տղաներով:

§ 41. Երբ ածականները մնանակ են գործ ածւում, ընդունում են անուն իմաստ, այս ժամանակ հուղարկում են (օր. աղքատ, աղքատի, աղքատից):

Օրէնքը պատճում է գողերին: Յիսուս բժշշկում էր կաղերին, կոյրերին և բորոտներին:

ԸԺԱԿԱՆՆԻ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ (ԵՄՓՈՓՈՒՄ):

1	Որակական:	Ո՞րպիսի, Բնչպիսի.
2	Յարարերական.	Ում, ինչէ, մրտեղի.
3	Թական	Քանակական.
	Թւական	Քանի, Իրքան
4	Ցուցական.	Այս, այդ, այն.
5	Անորոշ.	

ԳԵՐԱՆՈՒՅՆ.

§ 42. Այս բառերը, որոնք խօսի մեջ գործ են
ածուում ամուսների փոխարկեա, կոչում և դերանուա
(տուումուու)։

ԴԵՐԱՆՈՒՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

1. Անձնական (լավու)։ — Ես, դու, նա, (մենք,
դուք, նոքա)։

2. Ցուցական (յազաւուու)։ — ոս, դա, նա, այս,
այդ, այն։

3. Ստացական (որսույատուու)։ — իմ, քո, իւր,
(մեր, ձեր, նրանց)։

4. Փոխաղարծ (օչաւուու)։ — միմեանց, իրար,
մէկմէկու։

5. Ցարաթերական (օտնօսույատուու)։ — ով, ինչ ուր,
երբ, որ։ Հարցական (օօրոսույատուու)։ ով, ինչ, ուր,
երբ, ո՞ր։

Անորոշ (հեօրեծուլուտ) ոմն, ոչ ոք, ոչինչ, ով որ։
Արտագրել և գերանունների տակ գիծ քաշել։

98. Ասա դու ինձ, ոստդ վարդի, մւր ես ծել, մւր ես ծաղ-
կել, մր հովիտի, կամ մր գաշտի զարդարանք ես դու եղել, իս
մատիտը կորաւ, քոնը տուր, որ գրեմ։ Մեր տան առաջ պար-
տէզ կար։ Ես գնացի նրա մօտ։ Միրիր քո ընկերին, ինչպէս քո
անձը։ Տղաները միմեանց հետ կուռում էին։ Ես եկայ քեզ մօտ,
դու տանը չէիր։ Ինչ որ ցանես, այն կը հաճաս։ Մարդիկ պէտք
է իրարու օգնեն։ Ոչ ոք իրան չար չի կամենայ։

ԴԵՐԱՆՈՒՅՆՆԵՐԻ ՀՈԼԵՎՈՒՄ.

Եզ.ք. Ցոզ.ք.	Եզակի. Ցոզն.	Եզակի. Ցոզնակի.	Եզակի. Ցոզնակի.
Ես-մենք	դու-դուք	նա-նրանք	ինքը-իրանք
Եմ-մեր	քո-ձեր	նրա-նրանց	եր-իրանց
Ինձ-մեղ	քեզ-ձեղ	նրան-նրանց	իրան-իրանց
Հինձ-մեղ	քեզ-ձեղ	նրան-նրանց	իրան-իրանց
Բ. ինձնից-մեղնից	քեզնից-ձեզնից	նրանից-նրանցից	իրանից-իրանցից
Գ. ինձնով-մեղնով	քեզնով-ձեզնով	նրանով-նրանցով	իրանով-իրանցով
Ե. ինձնում-մեղնում	քեզնում-ձեզնում	նրանում-նրանցում	իրանում-իրանցում

Նա գերանւան պէս հոլովում էն. ոս, դա, գերանունները։

Բ Ա Յ.

§ 43. Այս բառերը, որոնք խօսի մեջ ցոյց են տա-
լիս առարկայի զուժողութիւնը կամ պրութիւնը (co-
stomachie), կոչում են բայ (ռացօլօ)։ (օր. Գիւղա-
ցին փայտ է կոտրում։ Երեխան քնած է)։

Բայը ցոյց է տայիս, թէ ինչ է անում առար-
կան, ինչ է կատարում նրա հետ։

Արտագրել և բայերի տակ գիծ քաշել։

99. Աքլարը կանչեց (ինչ արեց), օրը լուսա-
ցաւ (ինչ եղաւ)։ Մարդիկը իրանց գործին են գը-
նում։ Մըջիւնը բերնով իր կերն է տանում, մե-
ղուն ծաղիկներից հիւթեր է ծծում։ Դաշտը գոյ-
նըզգոյն ծաղկով է զուգուած, մարգագետինը կա-
նաչ է հագել։

Գրեցէք ինչ է անում առարկան։

100. Աշակերտը ... Ծառան ... Գիւղացին ...
Դարբինը ... Մայրը ... Դերձակը ... Կօշկակալը ...
Շունը ... Կովը ... Զին ... Կատուն ... Հաւը ...
Աքլարը ... Մազը ... Սոխակը ... Ծիծեռնակը ...

Գրեցէք ինչ է կատարում առարկայի հետ։

101. Զիւնը գարնանը . Աշնանը ծաղիկները...
Ամառը պտուղները... Գարնանը ծաղիկները.,.
Գարնան սկզբին գետի սառոյցը . Աշնանը օրերը...
Ամառը օրերը... ի՞նչ եղաւ պատը .. ի՞նչ եղաւ
Զաւէնը .. ի՞նչ եղաւ ապակին... ի՞նչ եղաւ գրի-
շը... ի՞նչ եղաւ գիրքը .. ի՞նչ եղաւ օրը:

102. Ո՞վ կամ ի՞նչը ի՞նչպէս է շարժւում:
Մարդը ... Զին... Կապիկը (մաղլցում է) ... Ծիտը...
Բաղը... Օձը... Առուն... Ո՞վ, ի՞նչ ի՞նչպիսի ձայն է
հանում։ Մարդը... Կովը..., Զին... Էշը... Կատուն...
Շունը... Ոչխարը... Մյծը... Ծիտը... Մեղուն... Ամ-
պը... Քամին... Առուն... Զանգը...

Խ ԱՆ Ա Ր Հ Ո Ւ Մ .

§ 44. 1. Բայր փոփոխում՝ է (գնալ, գնացի, գընացէք) թւով, դէմքով, ժամանակով և եղանակով:

2. Բայր թիւը երկուս է՝ եզակի և յոգնակի (գընացի, գնացինք):

3. Բայր երեք դէմք ունի. ես, դու, նա. (օր. ես գնում եմ, դու գնում ես, նա գնում է):

4. Ժամանակը ցոյց է տալիս, թէ բայր զործողութիւնը ե՞րբ է կատարում. (օր. գրում եմ—այժմ, գրում էի, գրեցի—առաջ, կրգրեմ—յետոյ):

5. Ժամանակը երեք է՝ ներկայ, անցեալ, ապանի:

6. Ներկան (առտօնաց) ցոյց է տալիս շարունակւող գործողութիւն:

7. Անցեալը (որշածաց) ցոյց է տալիս կատարւած—վերջացրած գործողութիւն:

8. Ապանին (նցածաց) ցոյց է տալիս մի գործողութիւն, որ յետոյ է կատարւելու:

9. Ներկան մէկ ձեւ ունի միայն. (գնում եմ):

10. Անցեալը՝ երկու, անցեալ անկատար (գրում էի) և անցեալ կատարեալ (գրեցի):

11. Ապանին երկու տեսակ է. բացարձակ ապանի (կըգրեմ) և անկատար ապանի (կըգրէի):

Ե Ղ Ա Ն Ա Կ Ն Ե Ր .

§ 45. 1. Եղանակները ցոյց են տալիս զործողութեան կերպը:

2. Բայր եղանակները հինգ են. սահմանական, ենթադրական (պայմանական), հրամայական, ստորագրասական և անորոշ:

3. Սահմանական (ազգայտելուն) եղանակը ցոյց է տալիս որոշ իրական կերպով (կատարւած կամ կատարւելիք գործողութիւն). (օր. գրում եմ, գրեցի, կըգրեմ):

4. Ենթադրականը (յօլօնու) ցոյց է տալիս մի գործողութիւն, որը կասկածի տակ է որի կատարւելը որդիշ պայ-

մաններից է կախւած (օր. եթէ գրեմ. կըգրէի, եթէ մատիտ ունենայի):

5. Հրամայականը (ուօւելունու) ցոյց է տալիս հրաման կամ ցանկութիւն. (օր. գրիր, ասա):

6. Ստորագրասական կամ՝ ըղձական եղանակը ցոյց է տալիս մի գործողութիւն, որը ցանկացւում է. (օր. գնամ, գնայի):

7. Անորոշ (ուուրծութեանու) եղանակը ցոյց է տալիս միայն եղելութիւն առանց դէմք, թիւ, եղանակ և ժամանակ ցոյց տալու (օր. գնալ, ուտել):

ԲԱՅԵՐԻ ԿՐՁՄՈՒԹԻՒՆԸ.

§ 46. 1. Բայր անորոշ եղանակը (սկիզբ) վերջանում է միշտ լ բաղաձայնով, որից առաջ գտնւած ա, է, ի ձայնաւորները կոչւում են լծորդ. (օր. կարդալ, գրել, ծաղկել):

2. Լծորդները լ բաղաձայնի հետ (ալ, ել, իլ) կազմում են բայրի վերջաւորութիւնը:

3. Բայր վերջաւորութիւնը կցում է կամ ուղղակի հիմքին. (օր. խօս-իլ, չըեր-ել, խաղ-ալ) և կամ ածանցին, որը ընկնում է հիմքի և վերջաւորութեան մէջ (օր. տես-ն-ել, ել-ն-ել, թըռ-չ-ել, մօտ-են-ալ). այստեղ ն, են, չ ածանցներ են, որոնք կոչւում են բայածանցներ:

4. Բայր արմատը կամ հիմքը նրա առաջին մասն է, որ անփոփոխ է մնում և իր մէջ պարունակում է բայրի գլխաւոր իմաստը:

§ 47. Բայրի վերջաւորութիւնների փոփոխումը թւով, դէմքով, ժամանակով և եղանակով կոչւում է խոնարհում (ոռոյաշենու)։

Բ Ա Յ Ե Ր Ի Ս Ե Ռ Ը.

§ 48. Բայերը ունին երեք սեռ:

1. Ներգործական (ծոնտայտելուն) ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որ անցնում է ուրիշ առարկայի վրայ. (օր. Որսորդն սպանեց գայլին):

2. Կրատորական (տրաճայտելուն) ցոյց է տալիս մի այնպիսի գործողութիւն, որը մի առարկայի իր վրայ կրում է ուրիշից. (օր. Գայլը սպանւեց որսորդից):

3. Զէզոր (ըրեծուն) ցոյց է տալիս այնպիսի գործողութիւն, որը չի անցնում ուրիշի վրայ, այլ մնում է գործողի մէջ (օր. նստել):

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐԻՆԱԿ.

Ս ա հ մ ա ն ա կ .	Ա ն ց ե ա լ ա ն կ .	Կ ա տ ա ր ե ա լ .	Վ ա ղ ա կ ս տ ա ր	Ա պ ա ռ ն ի .
Ն ե ր կ ա յ ժ ա մ ա ն ա կ .	Ա ն ց ե ա լ ա ն կ .	Կ ա տ ա ր ե ա լ .	Վ ա ղ ա կ ս տ ա ր	Ա պ ա ռ ն ի .
Ե ս գ ր ու մ ե մ	գ ր ու մ է ի	գ ր ե ց ի	գ ր ե լ ե մ	կ ը գ ր ե մ
դ ու զ գ ր ու մ ե ս	գ ր ու մ է ի ը	գ ր ե ց ի ւ	գ ր ե լ ե ս	կ ը գ ր ե ս
Ն ա գ ր ու մ է	գ ր ու մ է ր	գ ր ե ց	գ ր ե լ է	կ ը գ ր է
մ ի ն ք գ ր ու մ ե ն ք	գ ր ու մ է ի ն ք	գ ր ե ց ի ն ք	գ ր ե լ ե ն ք	կ ը գ ր ե ն ք
դ ու ք գ ր ու մ է ք	գ ր ու մ է ի ք	գ ր ե ց ի ք	գ ր ե լ է ք	կ ը գ ր է ք
Ն ր ա ն ք գ ր ու մ ե ն	գ ր ու մ է ի ն	գ ր ե ց ի ն	գ ր ե լ ե ն	կ ը գ ր ե ն

Առաջատարիան եղանակ.	Թայմանակ. եղ.	Հրամայական եղանակ.
Ներկայ ժամ.	Անկատար.	Անցեալ.
թէ (որ) գրեմ	թէ գրէի	կը գրէի
թէ գրես	թէ գրէիր	կը գրէիր
թէ գրէ	թէ գրէր	կը գրէր
թէ գրենք	թէ գրէինք	կը գրէինք
թէ գրէք	թէ գրէիք	կը գրէիք
թէ գրեն	թէ գրէին	կը գրէին

ԱՆԿԱՆՈՒ ԲԱՅԵՐ.

§ 49. Անկանոն ատում՝ են այն թայելը, որոնց կատարեալը եւ հրամայական եղանակը տարբեք ձեռով է կազմւում։

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՆ ԵՆ.

Կատարեալ.	Հբամ.		Կատարեալ.	Հբամ.
բերել	բերի..	բեր..	ուտել	կերայ..
դալ	եկայ..	եկ..	լալ	լացի..
բանալ	բացի..	բաց..	տալ	տւի..
դառնալ	դարձայ..	դարձիր	տանել	տարայ..
դնել	դրի..	դիր..	տեսնել	տեսայ..
երթալ	գնացի..	գնա..	նստել	նստի..
զարնել	զարկի..	զարկ..	ասել	ասի..
բնկնել	բնկայ..	բնկիր..	անել	արմ..

ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԵՐՖԱԿԻՑԹԵԱՆ ՀԱՐԱՐ

103. ՀԵՅՐԸ ԵՒ ՈՐԴԻԲԸ.

Հայրը պատւիրեց, որ իր որդիքը միմնանց հետ ապրեն համաձայն։ Նրանք չէին կատարում հօր պատւէրը։ Այն ժամանակ հայրը բերել տւեց մի ցախաւել և ասաց որդող։

—Կոտրեցէք այս ցախաւելը:

Նրանք շատ չարչարւեցին, բայց չըկարողացն: Հայրը յետ արաւ ցախաւելը և հրամայեց, որ ամեն մի ճիպոտը առանձին կոտրեն. Նրանք հեշտութեամբ կոտրեցին աւելները: Հայրն ասաց.

— Այդպէս և դուք. եթէ ապրէք համաձայնութեան մէջ՝ ոչ ոք ձեզ չի յաղթի. իսկ եթէ իրար հետ կուէք և միմեանց հակառակ լինէք՝ ձեզ ամեն մարդ հեշտութեամբ ջոկ-ջոկ կոչնչացնէ:

104. Եղանակներ.

Աշնան սկզբին մի բարակ քամի
Սարիցը եկաւ դաշտերը իջաւ,
Վըսանց, փափսաց մի բան ամենքին
Ու անցաւ գնաց, անտառը մտաւ:

Խոտը չորացաւ, հողը ցամաքեց,
Այստեղ ու այնտեղ բացւեցին ձեղքեր,
Անտառը դոդաց, ու վախից իսկոյն
Դեղին գոյն առան կանաչ տերևներ:

Նուրին Նուրին եկել է, աջբա հուրին եկել է,
Շիլա շապիկ հագել է, կարմիր գօտիկ կապել է,
Եղ բերէք, պորտին քսենք,
Զու բերէք, զլխին ածենք,
Մեր Նուրինի փայը տւէք,
Ուտենք, խմենք քէֆ անենք:

105. *Enthus.*



ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

Գիշերն անցաւ. առաւետեան
Մէզը փուեց գաշտի վրայ,
Շուտով արտոյտն իւր վաղորդեան
Աւետիքը պիտի տայ.
Արշալոյսը բացւեցաւ,
Քնած երկիրն արթնացաւ:

Դեռ նիհըում են դաշտ, անտառ,
Բայց գեփիւսը արտերին
Գուրգուրելով երգ սիրավառ
Շնչջում է մեղմագին,
Արշալոյսը բացւեցաւ,
Համ արարած արթնացաւ:
Բովէ, Յովիճաննիսկան.

Յովի. Յովիաննիսեան.

106. ԱՐԱՐԵ ՄԱՐԱԽՄ.

— Տեսէք այս սարը կանաչով պատած, այստեղ
ու այստեղ վրաններ թողած, վրանի դիմաց հայ,
թուրք գիւղական մի մի գործ ձեռին բանի է
նստած. որը տաշում է, որը սրում է, որը կար
կարում, տղին օրօրում, որը հաց կամ կաթ է
տաքացնում, կարագ ու պանիր, մածուն պատ-
րաստում:

Ահա քիչ հեռի նրանց տաւարը, ոչխարի հօտեր, ձիանց բոլուկներ, մինչև փորի տակ խոտերում ծածկւած, կամ զլպան ջրի ափը հաւաքւած, տկղած կանգնել են, չեն շարժւում տեղից, ինչու որ կուշտ են ու գոհ վիճակից:



U U Y F C 3.

§ 50. Այս բաները, որոնք ցուց են առիթս գրծութեան կամ վիճակի տեղը, ժամանակը, կերպը, քանակը, կոչումը են մակըաց (սարևութէ) .

ՄԱԿԲՈՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

1	Տեղական.	Այստեղ, այստեղ, մօտ, ուր, ոբաղից.
2	Ժամանակական.	Միշտ, երբեմն, առաջ, նախ, յետոյ, ուշ, գեռ, վաղ, արդէն, երբէք.
3	Քանակական.	Աւելի, ավելաս, քիչ, շատ, երկիցու.
4	Որակական.	Հաղիւ, սաստիկ, բանի, կամայ-ակամայ, արտի, դանդաղ, յանկարծ, չարտչար, ծածուկ, յաճախ.
5	Հարցական.	Ինչու, ե՞րբ, մի՞թէ, արդե՞օք.
6	Հաստատական.	Եյ՛, անշուշտ, իհարկէ.
7	Ժխտական.	Ո՛չ, ոչ երբէք, մի՛, չէ՛, ամենեին, քա՞ւ լիցի.
8	Կասկածական.	Թերևս, գուցէ, արդեօք, մի գուցէ.

§ 51. Մակրայներ կազմող մասնիկներ են.

Կամովին, լիովին. պէս. վերջապէս, այսպէս.
բար. քաջաբար, վատաբար. երէն. հայերէն, սուսերէն.
կի. կողմանակի, անցողակի. օրէն. գերազանցօրէն.

§ 52. Բացի սրանցից, կան գոյականից, ածականից, գերանունից, բայից զանազան ձևերով կազմուած մակրայնելք: (օր. Այսօր, երեկոյեան, վաղը, հերու, հնուց, տանը, սիրով, ժամանակով):

§ 53. Մակրայ նն նաեւ այն քոլոր ածականչեթը,
որոնք ռայերի հետ են գոբծածում:

Օր. Լաւ զրել, քաղցր երգել, արագ քայլել,
զեղեցիկ նկարել:

Արտագրել և մակբայների տակ գիծ քաշել

107. Արեգակը դուրս է եկել պապղալով։ Մեր

գպրոցում այսօր հանդէս կար: Յուրաք փշեց ձը-
մեռ սաստիկ: Աքլորը վաղուց կանչել է: Հազիւ
էր լսում նրա ձայնը: Գնացքը սրբնթաց անցաւ
մեր առաջից: Հեղինէն լաւ է կարդում ու դրում:
Վաղը Արամը սայլով դիւդ է գնալու: Մայխախն
բացւում է վարդը, սոխակ երգում՝ անուշակ: Ե-
րեկ անձըն եկաւ: Ծոյլերը ուշ են վեր կենում:
Աշակերտները կարդով գնացին դասարան:

ՃԱՂԿԱԳ.

§ 54. Շաղկապ (օօլօՅԴ) աստում են այն բառերը,
որոնք կապում են միմևանց հետ բառեց կամ՝ խօսքեր:
(Օր. Շուշն ու կատուն: Ես տւի, բայց նա չառաւ):
Դիմաւոր շաղկապներն են.

և, ու, այլ, կամ, թէ, եթէ, թէ որ, իսկ, թէ-պէտ, սակայն, բայց, որովհետեւ, մանաւանդ, արդարեւ, երբ, երբ որ, բայն, ուըեմն, նոյն իսկ, մինչդեռ:

ԵՇԽԳԻՐ ԵՒ ՅԵՏԱԴԻՐ.

§ 55. Այս բառեվը, ոքոնք կապամ են երիւ բառ
եւ նրանց փոխադարձ յաբարերութիւնն են ցոյց տալիս,
կրչում են **նախղիք** (ուշօճութ), երբ անոններէց տուած
են դրած եւ **յետաղիք**, երբ անոններից յմտոյ են
դրած:

§ 56. Նախդիրները եւ յետադիքները միշտ հոլոված պառերից առաջ կամ յետոյ են դրաւմ:

Նախդիրներն են. առանց (ար. հ.), դպի (հայց. հ.), մինչև (հայց.), բացի (բացառ.), վոխանակ և հակառակ (ար.)

Յետապիճներն են. Սեսական հոլ, առջև, ևտե, վրայ, տակ, սերքե, փերե, շուրջը, առթիւ, մէջ:

Տրական հոլով. համար, դէմ, չսլի, մօտ, պէս, նման, հանդէպ, դիմաց.
Բառաւ, հաւ, պուս, զատ, առաջ, հեռու, ծածուկ.

2 E 3 U U P 4 0 H H P H U.

§ 57. Զայնալիկովթին կոշտում ևն այն բառերս, որոնք արտայացուում են զանազան գաղցնութեր.

Ուրախութիւն—այ, Էյ.
զարմանքը—վահ, վայ.
տիրութիւնը—ախ, աւաղ.
զգւանքը—թհւհ.

Դայնարկութիւն են նաև Երանի թէ, կեցցես,
ողջնյն, տօ, ծօ, քա, հօ-հօ, քըշ-քշ, ձիկ-ձիկ,
փըշտ:

ՄԱՍՈՒՆՔ ԲԵՆԻՆԵՐ (ԱՐՓՈՓՈՒՄ)

		ՀԱՐՑԵՐԸ	Տ Ե Ս Ա Կ Ն Ե Բ Ք Լ.
1	Գոյական	Ո՞վ, ի՞նչ	Յատուկ, հաւաքական.
2	Ածական	Ի՞նչպիսի, ո՞ւմ, քանի, ի՞նչէ, ո՞ր	Որակական, յարաբերուկան, թը- ւական, ցուցական, անորոշ, փո- խագարձ.
3	Դերանուն	Ո՞վ, ո՞ւմ, ի՞նչ	Անձնական, ցուցակ, ստացակ, յարաբերակ, հալցակ, անորոշ.
4	Բայ	Ի՞նչէ անում, ի՞նչէ լինում	Ներգործական, կրաւդրական, չէզոր.
5	Մակըրայ	Ե՞րբ, ո՞րտեղ ի՞նչպիս, քանի անզամ	Տեղական, ժամանակական, քա- նակ, որակակ, հարց., ժիստակ, կասկածակ, հաստատական.
6	Շաղկապ	—	Համադասական, ստորագասակ.
7	Նախդիր Ցետադիր	—	—
8	Զայնար- կութիւն	—	—

108. ՈՍԿԻ ԶԿՆԻԿ.



ՊՈՒՏԱՎԻՆ

Ահա մէկ օր էլ ծերը գնաց ծով,
Որ ծուկը որսայ իր մաշւած ցանցով.
Նա ուրախ ուրախ ցանցը ծով ձգեց,
Առաջին անգամ միայն տիղմ հանեց:
Երկրորդ անգամը ցանցը ձգեց ծով,
Ցանցը դուրս եկաւ ծովային խոտով:
Իսկ երրորդ անգամ, որ ցանցը ձգեց,
Ո՞վ կարէ ասել, թէ ի՞նչ դուրս հանեց.
Նա բերաւ իր հետ մի ոսկի ձկնիկ,
Զկանց արքայի դուստրը գեղեցիկ.
Ծերի ցանցն ընկաւ իրքն խեղճ գերի՝
Ոսկի աղջիկը ծուկ թագաւորի:

ՊՈՒՏԱՎԻՆ

ՎԱՐԺ. ձուկն—ձկնիկ, ծեր—ծերուկ.
Թոռն—^o, մժեղ—^o,
զառն—^o, մանչ—^o,

Երացնել հետեւալ բառերը. (ՔՐՄԵՂԻՑ) տանի×,
Դպրոցի×, անտառի×. (Ի՞նչ արեց) գնա×, մնա×,
Գնե×, բերե×, ծախե×:

109. ՓԻՂԼ ԵՒ ՔՈԹՈԹԼ.



Կ Ռ Ի Ռ Ո Վ.

Մէկ փիղ առած ման
կ'ածէին
Փողոցներից անցնելով,
Յանկարծ քոթոթ մի
կուսէր
Վրայ վագեց խիստ հա-
չելով:
«Չայնդ կտրիր, դրացի
եղբայր»,

Ասաց գամփոր մեր քոթոթին
«Չես տեսնում, որ ծաղը եղար,
Բոլոր շների դու առաջին.
Դու մվ ես, և նա ով,
Ահա քո հեքդ է բոնում,
Իսկ նա հանդարտ և անխոռով
Հաշելուդ էլ ուշք չի դնում»:
— Հա, հա, հա, հա, դու չիմաշար—
Պատասխանեց մեր քոթոթը,—
Ու իմ միտքս չըհասկացար:
Հեռւից կանչեմ, կուեմ հետը.
Որ մեծ բանի մէջ երեամ,
Եւ ուրիշներին ասել տամ.
«Տեսէք, քոթոթն ինչպէս քաջ է,
Որ փղի գէմ էլ կը հաչէ»:

ԿՈՒԼՈՎ.

110. Ա Ր Ե Ւ.

Արե, արե, եկ, եկ, զիզի քարին վեր եկ.
Սկսե ամպեր հեռացէք, արևին ճամփայ տւէք:
Թողէք դա գայ սեզ մօտ, դրա լոյսին ենք կարօտ,
Կարմիր արե, եկ, եկ, նախշուն քարին վեր եկ:

U S A P O P T U L.

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Բ Ա Ռ Ե Ր Ե Կ Ա Գ Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Վ Ե

ન એ પુરૂષ એ બાળ થિયે.

§ 1. Խօսքը կազմած է նախադասութիւններից:

Մի միտք արտայայտած ըստերով, կոչում է նախադասութին (предложение) (օր. Հաւը խոսեցաւ, օրը բացւեցաւ):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ.

b u o u q u g

§ 3. Թվաւոր առարկան, որի մասին խօսումը է նախադատութեան մէջ, կոչումը՝ Ենթակայ (ոօծե-
յապէ): Ենթական պատասխանում՝ է. նվ, (շնչառո-
ները), ի՞նչ (անշունչները) հարցերին:

Նախադասութեան մէջ գտնիկ ենթական և հարց տալ ով
կամ՝ ի՞նչ:

Աշակերտը կարգում է: Ճրագը վառւում է:
Արել լուսաւորում է: Մուկը խաղում է: Երկին-
քը պարզ է: Զաւէնը քնած է: Դաշտը ծածկւած է
ծաղիկներով: Երկաթը մետաղ է: Եղբայրս մի
շնիկ ունէր: Այսին պտղաւէտ է:

§ 4. Ի՞նչ, ենչ որ առաջի կամ խօսում է Անթակայի մասին, կը չում է ստորոգեալ (շազցեմօք). Ստորոգեալը պատահիանում է. ի՞նչ է անում առարկան (օր. Օձը սողում է): Բ՞նչ է կատարւում նրա հետ: (Օձը սառեց): Ի՞նչպէս է առարկան: (Օձը թունաւոր է): Ի՞նչ է նա: (Օձը սողուն է):

Արտազրել և ստոքողեալի տակը զիծ քաշել:

Գիւղացին ցանում է: Գետը հոսում է: Մըր-
ջիւնը մօտեցաւ առւակին: Հովիւը սրինգ է նւա-
գում: Բալենին ծառ է: Զկնորար ձուկ է որսում:
Վարդը հոտաւէտ ծաղիկ է: Կովը ընտանի կեն-
դանի է: Գիշերը մութն է: Զմեռայ օրը կարճ է:
Չուկը լողում է: Զիւնը հալեց արեից: Մարերը
ծածկեցան կանաչով, բաւենին ծառ է:

Ե՞սթակալին աւելացնել ստորոգեալ

Գիրքը... (ի՞նչպէս է): Մեղանը... (ի՞նչ է): Ու-
սուցիչը... (ի՞նչ է անում): Տունը (ի՞նչ եղաւ):
Վարդը... Խնձորը... Քամին... Որսորդը,, Զուկը...
Պատուհանը... Զին... Զիւնը... Զկնորսը... Ուռե-
նին... Գիւղացին... Դարբինը... Կաղնին... Մեղը...
Ծովը... Զուրը... Գնդակը... Աշնանը ծաղիկները...
Պղպեղը,, Աղւէսը... Մայիսը,, Ուրբաթը... Քա-
հանան... Գարունը...

Իւրաքանչիւր ստորոգեալին աւելացնել ենթակայ:

... զըռում է, ... հաշում է, ... բզզում է, ...
բարի է, ... ծաղիկ է, .., մեռաւ, ... զրում է, ...
երգում է, ... համեղ է, ... դառն է, ... միջատ է,
... հիւանդացաւ, ... սովորեցնում է, ... որսում
է, ... թոչուն է, ... սողուն է, ... մեծ է, ... լայն
է, ... փշում է, .. հաստ է, ... հին է, ... շինու-
թիւն է:

ՊԱՐՁՈՂ ՌԱՌԵՐԻ ՏԽՍՍԿՆԵՐԸ.

Լ. Բ Ա Յ Ո Ւ Ց Ի 2.

§ 5. Այն պարզող բառերը, որոնք պատասխանում են. հւմը—ի՞նչին, հւմ—ի՞նչ, հւմնով—ի՞նչով, հւմ-նից—ի՞նչից հարցերին, կոչում՝ ևն լրացուցիչ (ծովունենու)։

Գիծ քաշել լրացուցիչ բառերի տակ, տալով յարմար հարցեր։ Հովիւր արածացնում է հօտը։ Մայրը սիրում է երեխային։ Զինւորը ծառայում է Հայրենիքին։ Ձկնորսը ցանցով ձուկ է բռնում։ Մէկ ծաղկով գարուն չի գալ։ Ես իմ եղբօրից նամակ ստացայ և տւի մայրիկին։ Երկինքը ծածկւել է ամպերով։ Գիւղացին գերանդիով խոտ է հնձում։ Դարբինը մուրճով երկաթ է ծեծում։ Ուկուց մատանի են շինում։ Ուսուցիչը աշակերտին մի գիրք ընծայեց։ Ես տեսայ Սուրէնին, որ նամակ էր գրում։

Աւելացնել լրացուցիչներ.

Մենք աղօթում ենք (հւմ)։ Կօշկակարը (ի՞նչ է) կարում։ Գարունը գեղեցիկ է (ի՞նչով)։ Ես նամակ գրեցի (հւմ)։ Դաշտը ծածկւեց (ի՞նչով)։ Երեխաները (ի՞նչ) կերան։ Աշակերտը գրում է (ի՞նչը, ի՞նչով)։ Մայրս ստացաւ (ի՞նչ, հւմնից)։ Ոչխարը (ի՞նչ) է տալիս։ Թուչունը ազատւեց (ի՞նչից)։ Արծիւր (ի՞նչ) հիւսեց։ Գիւղացին վարում է (ի՞նչը, ի՞նչով)։ (ի՞նչից) խոփ են շինում։ (ի՞նչից) ամաններ են շինում։ Ես (ի՞նչով) տուն եկայ։

Ո Ր Ո Ւ Ց Ի 2.

§ 6. Այն պարզող բառերը, որոնք պատասխանում են. ի՞նչպիսի, հւմ, հր, հրքան հարցերին կոչում ևն որոշիչ (որքունենու)։

Գիծ քաշել որոշիչների տակ, տալով յարմարաւոր հարցեր։ Փայլուն արել ելաւ։ Միրուն ծաղիկները թօշնել են. երկու աղաւնի նստած էին ծառի վրայ։ Մենք սիրում ենք բարի և խելօք մանուկներին։ Գիշելայ մութը աշխարհս պատեց։ Մեր տունը երկրորդ փողոցի վրայ է։ Կացնի բերանը սուր է։ Պայծառ լուսինը մտաւ մութ ամպի տակ։ Երեք մարդ գնացին գիւղ։ Մարտը գարնան առաջին ամիսն է։ Հսկայ արծիւր նստել էր բարձր ծառի վրայ։ Սւելացնել որոշիչներ։

(ի՞նչպիսի) ձմեռը կացնի։ Ծառից կախւած են (ի՞նչպիսի) պտուղներ։ Տարին (քանի) ամիս ունի։ (Ո՞ւմ) պարտէզը գեղեցիկ է։ (Ո՞ւմ) գիրքը կորաւ։ (Ո՞րպիսի) աշակերտը արժանի է գովեստի։ (ի՞նչպիսի) թուշունները վերադառնում են։ Մեր դասարանում (քանի) աշակերտ կայ։ (ի՞նչպիսի) աղւէսը մի հաւ փախցրեց։ (ի՞նչպիսի) շունը պահպանում է (ի՞նչի) հօտը։

ՊԱՐԱԳԱՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ.

§ 7. Այն բառերը, որոնք պատասխանում են. հրտեղ—հրտեղից, Երբ, ի՞նչպէս, ի՞նչի համար, ի՞նչից, կոչում են պարագայական բառեր (օբյուլտելու տեսական համար)։

Պարագայական բառերի տակ գիծ քաշել յարմարաւոր հարցեր տալով։

Պարագայական բառերի տակ գիծ քաշել, յարմարաւոր հարցեր տալով։

Մենք այսօր այգի գնացինք խաղող քաղելու։ Երեկ մեր դպրոցում հանդէս կար։ Գիւղացիները առաւօտեան անտառ գնացին փայտ կտրելու։ Նալաւ է գրում։ Ուրախ փայլում է արեգակը։

Առխակը քաղցր է երգում վար արշալոյսին, վար-
դի թփենու վրայ: Երեանում շատ այգիներ կան:
Մանուկները գնում են դպրոց սովորելու: Մենք
ամառը դիւղ գնացինք: Գարնանը անտառում
թռչունները ուրախ երգում են: Գառը շոգին զը-
նաց դէպի առակ ջուր խմելու: Այս տարի բեր-
քը առատ էր:

Աւելացնել պարագայական բառեր:

... գետինը ծածկում է կանաչով: | Չուկը
լողում է... | Գայլը գառանը տարաւ... | Պառաւ տա-
տը դուրս չի գալիս... | Պտուղները հասնում են... |
... ծառերի տերենները դեղնում են: | Արսէնը...
դուրս եկաւ... | Աշխէնը ... երգում է: |
Աշակերտները գնում են ... | Նա ... է գնում:
Վարդը բացւում է ...:

ԴԻՄՈՂ ԿԱՄ ԿՈՉԱԿԱՆ ԲՐՈՅԲ.

§ 8. Նախադասութեան մէջ այն առարկան, որին
որ դիմում ենք, կոչում է կոչսկան բառ (օբրապենի).

Կոչսկան բառերը նախադասութեան մէջ բաժանում են
միւս անդամներից ստորակէտներով. իսկ նախադասութեան ըս-
կըրին և վերջին ընդունում են նաև զարմացական (") նշան:

Աստւած, օրհնիր մեր աշխատանքը: Մնաս
բարով, իմ հայրենիք: Այ մարդ, այսօր շատ քը-
նեցիր: Դէհ, քաշեցէք, սիրուն եղներ, առաջ տա-
րէք արօրը: Ասա դու ինձ, ոստդ վարդի, ուր ես
ծլել, ուր ես ծաղկել. Ընկերներ, լինինք ջանա-
սէր: Տէր, դու պահիր մեզ: Ծիծեռնակ, ծիծեռ-
նակ, ուր ես թռչում այդպէս արագ: Կոռւնկ,
ուստի (որտեղից) կ'ուզաս: Զայն տուր, ով ծու-
վակ, ինչո՞ւ լոռում ես:

ՆԵԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

§ 9. Նախադասութիւնները լինում են՝ համառօտ,
ընդարձակ, պարզ, միաւորեալ, բաղադրեալ, մի-
ջանկեալ և անդէմ:

ՀԵՄԱՍԹՈՑ ՆԵԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

§ 10. Համառօտ (բառութիւնը) ասում է այն նա-
խադասութիւնները, որ կազմած է միայն ԵՆԹԱ-
ԿԱՅԻՑ և ստորոգեալից: Օր, Եկաւ ըարունը. Ճիւ-
նը հալւեց. դաշտերը կանաչեցին:

ԸՆԴԵՐՁԱԿ ՆԵԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

§ 11. Ընդարձակ (բառօտքանութիւնները) ասում է այն նա-
խադասութիւնները, որոնց մէջ բացի ԵՆԹԱ-
ԿԱՅԻՑ և ստորոգեալից կան պարզող բառեր:

Օր Վերջապէս եկաւ սիրուն գարունը: Ճիւ-
նը վազուց հալւել է: Թռչունները ուրախ թրոչ-
կոտում են դաշտերում և անտառներում:

ՄԻ ԱԻՌԵԱԼ ՆԵԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

§ 12. Միանորեալ (ըլոտիօն) ասում է այն նա-
խադասութիւնները, որոնց մէջ կան մի բանի ԵՆԹԱ-
ԿԱՆԵՐ, մի բանի ստորոգեալներ և միատեսակ
պարզող բառեր:

Կրկնող անդամները իբարուց բաժանում են ստորակէ-
տով. ստորակէտ չի գրում ենց առաջ, երբ կրկնուած չէ և ա-
ռանց շեշտի է:

Կովը, շունը և ծին վիճում էին: Աշակերտնե-
րը ուսումնաբանում գրում են, կարդում են, հաշ-
ուում են և նկարում: Մահը չի խնայում՝ և հա-
րուստներին, և աղքատներին, և մեծերին, և
փոքրերին: Արամը գրախանութից գիրք, մատիտ,
գրիչ և տետրակներ գնեց:

§ 13. Միանդեալ նախադասութիւնները կարևի է պարզ նախադասութիւնների վերածել:

Օր. Հաւը, աղաւնին և սագը թոշուններ են:

Հաւը թոշուն է. աղաւնին թոշուն է. սագը թոշուն է:

ԲԱՂԱԴԻՇԱԼ ԿԱՄ ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

§ 14. Բարդ (սլոյչու) ասւում և՛ այն նախադասութիւնները, որոնք կազմւած են երկու նախադասութիւնից, որոնցից մէկը գլխաւոր է (ըլացու), իսկ միւսը երկրորդական (որսձատօնու):

2. Երկրորդական նախադասութիւնը պարզում և լրացնում է գլխաւոր նախադասութիւնն որևէ անդամի միտքը:

3. Երկրորդական նախադասութիւնը լինում է՝ հնթակայ, որոշիչ, լրացուցիչ և պարագայական և պատասխանում է այն հարցերին, ինչ հարցերի որ պատասխանում են հնթակայ որոշիչ, լրացուցիչ և պարագայական բառերը (տես եր. 68—69):

4. Գլխաւոր նախադասութիւնը երկրորդականից բաժանում է ստորակէտով. Երբ երկրորդական նախադասութիւնը գլխաւոր նախադասութիւնն մէջ է ընկած, բաժանում է ստորակէտուներով կամ բութով:

Ցոյց տալ երկրորդական նախադասութիւնների տեսակները:

Մի ջանասէր մանուկ, լուսամուտի մօտ նըստած՝ պատրաստում էր դասերը: Փայլուն արևի շողքն ընկնելով գրքի վրայ, դուրս էր հրաւիրում մանուկին: Անտառը ձմեռուայ քնից արթնացած, իր տերենները շարժում է կամաց: Կոյր ծնւած մի մարդ հարցընեց մէկին. «Ի՞նչ գոյն ունի կաթը»: Պարոնը ծառային պատիրեց, որ զգոյշ մնայ: Մեր տունը, որ հին էր, փուլ եկաւ: Երեկոյեան, երբ արել մայր էր մտնում, մենք տուն հասանք: Մանուկը, որ հիւանդանոցում պառկած էր, լաւացաւ: Խորէնը ցրախց դողում էր, ինչպէս ծառի տերեկը: Տեսնում ես այն կամուրջը, որով պէտք է անցնենք:

Ծառերն անտառում՝ երբ շատ նեղացան կացնի ձեռիցը, խորհուրդ արին, որ մի հնարք գտննեն: Ով որ կոթ կը տայ պղղպատէ կացնին՝ թող «հոգւոցն» առէ տուաջ իւր անձին (երկր. ենթ. ն.): Կանաչ այգիները, որոնք մարդու սիրտ էին ուրախացնում, այժմ ամայի են գարձել: Զկնկուլը գետի տփերն են վազում՝ ձուկ-մուկ բռնելու: Բոլոր թոշունները լուռմ են, մինչեւ անցնի հեռանայ ահեղ արձիւը: Ով ականջ ունի լսելու, թող լոէ:

ԳՐ. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԻՆ.

§ 15. Պարզ (որօշու) ասւում է այն նախադասութիւնը, որը ոչ բարդ է, ոչ էլ միաւորեալ:

ՄԻ ՋԱՆԿԵԱԼ ԲՈՌ ԵՒ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԻՆ.

§ 16. Միջանկեալ (օօօծու) ասւում է այն բարը եւ նախադասութիւնը, որոնք ընկած են ուրիշ նախադասութեան մէջ և նրա ոչ մի անդամից կախում չունին: Օր. Մի անգամ (յուլիս ամսին էր այդ) ես գիւղ գնացի: Քոյրս, գժբաղդաբար, հիւանդ է: Դու, երեկի, չգիտէի՞ր այդ: Հայրս, հաւանօրէն, վաղը կը գնայ Մոսկւա:

Միջանկեալ բառը և նախադասութիւնը գլխաւորից բաժանում է ստորակէտով կամ փակագծով:

ԱԵԴԻՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆԻՆ.

§ 17. Այն նախադասութիւնը, որի մէջ ենթական անորոշ կամ բոլորովին անյատ է, կոչում է անդէմ (եզմլիկու):

Օր. Յրտեց: Լոեց: Ասում են, որ վաղը հանդէս է լինելու դպրոցում: Անձրեւում է: Պատմում են, որ տուաջ մարդիկ աւելի անվախ են եղել:

ԿԵՏԱԿԻՐՈՒԹԻՒՆ.

§ 18. Կետակիրութեան նշաններն են. վերջակէտ (.), միջակէտ (.), ստորակէտ (.), բութ (°):

1. Վերջակէտ դրում է ասացւածքի կամ խօսքի վերջում:

2. Միջակէտով բաժանւում են նոյն ասացւածքի մասերը, ևթէ բաւական երկար են:

3. Ստորակէտի գործածութիւնը տևու երես 70—73:

4. Բութ դրում է, երբ նախաղասութեան մէջ մի բառ գեղւած է, որը զօրութեամբ է հասկացուում: (օր. Սաւուղը հազարին սպանեց, Դաւիթը՝ բիւրին): տ. եր, 5, 47, 72.

5. Բութը ցոյց է տալիս թւարկութիւն: (օր. Աշխարհի մասերն են՝ Եւրոպա, Ասիա, Ամերիկա):

ԱՌՈԴԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՑԱՅԱՅՑՈՒԹԵԱՆ ՆՃԵՆՆԵՐ.

§ 19. Առոգանութեան եւ բացայատութեան նշաններն են՝ շեշտ (‘), հարցական նշան (°), բացականչական կամ զարմացական նշան (‘), չակերտ («»), փակագիծ (), բազմակէտեր (...), անջատման զիծ (—):

1. Չակերտ դրում է, եթք ուրիշի խօսքերն իսկութեամբ մէջ է ընթառու:

2. Չակերտից առաջ դրում է միջակէտ. չակերտից յետոյ առաջին բառը մեծատառով է սկսում:

Օր. Արկը իջաւ սարերի թիկունք. մայրերն ասացին. «Ուր է մեր աղջկունք»: Հուրը պլազ, աղջիկը կանչեց. «Իմ մեղաց համար Աստւած ինձ պատժեց»:

3. Անջատման զծով բաժանում են հարց ու պատասխանները:

- Ինչու կուլաս, դու գառնիկ,
- Խիստ ծեծ կերայ, ես, մայրիկ,
- Քեզ ով ծեծեց իմ գառնիկ,
- Մէկ չար պառաւ, միս մայրիկ:



ՊԱՆԴԻԽԵ ՄԱՀԻ.



ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Փահանուտ սենեակի մէջ, կտրիճ ու քաջալանջնորահասակ, նորապատակ մի երիտասարդ, մահճի մէջ հիւանդ ընկած կրհեծէ. ընտանի հոգացող մտերիմերից ոչ ոք ունի շուրջը՝ ոչ գորովալի ծնողը, ոչ անձկալի ամուսին, ոչ քոյը, ոչ եղբայր, ոչ բարեկամ, ոչ ազգական: Եւ նա այնպէս ի վերջոյ մեռնում է անխնամ, անդեղ, անդարման: Հոքեարքի պահուն մարած աչքերը այս կողմ այն կողմ կըյածէ. երևակայեցէք, թէ ում տեսնել կուգէ... Այնտեղ չեն զինքը լացող ընտանիքը, որ մի կաթ արտասունք թափեն մեռած պանդիտի մահճի վրայ: Եւ ովէ խեղճ պանդիտի յուղարկաւորը... մի պանդուխտ քահանայ, որ գնում է գագաղի առաջից, իսկ յետեկց լուս գնում են մի քանի պանդուխտ եղբայրներ. իսկի չի լսում ողը ու կոծ. պանդուխտները տանում են պանդիտին, օտար երկրին ու հողին են աւանդում...

Վահ, հազար վահ. այժմ ով կըվարէ հայրենիքի արտերը. ով կըցանէ, ով կըհնձէ: Դաշտերն ամայի են մնացած, նոցա հողասէր, չարքաշ մշակները, օտարութեան մէջ մաշելով, կսպառին և կըմեռնին ընտանեաց կարօտով, ջրի կարօտով, սիրելեաց ու բարեկամաց կարօտով:

Խրիմեան Հայրիկ.

Ծառի ճըճին ծառիցն է,
Զար թշնամին տանիցն է:



ԳԱՄԱՅԻ-ՔԱՐԻՊԱ.

Օ Բ Օ Բ Ո Յ Ի Ե Բ Դ .

Արի, իմ սոխակ, թնդ պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր արդիս աչերին.
Բայց նա լալիս է. դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:
Ե՛կ, աբեղաձագ, թնդ արտ ու արօտ,
Օրօլէ արդիս, քընի է կարօտ:
Բայց նա լալիս է. դու, ձագուկ, մի գալ,
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:
Թնդ դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վույկույով տրդիս բեր անուշ քունը:
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի գալ
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ:
Կաչաղակ, ճարպիկ, գող, արծաթաւէր,
Շահի զըրուցով որդուս քունը բեր:
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ:
Թնդ որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկա՞ւ որդիս լըսեցաւ,
Ռազմի երդերի ձայնով քընեցաւ:

Ո. Պատկանեան (Գաման. Քաթիպա).

Գ Ա Բ Ն Ա Ն Ը.

Զմրան ձիւնը դեռ բոլորովին չըհալւած, նոր
և փափուկ կանաչ խոտ է սկսում դուրս գալ: Խո-
տի հետ միասին դուրս են գալիս և առաջին ծա-
ղիկները: Ծառերը նոյնպէս ձմեռային քնից գարթ-
նում են և սկսում են քիշ-քիշ կանաչել ու ծաղկել:

Գարունը գալուն պէս՝ թռչուններն էլ երե-
ւում են: Արտուտները, ծիծեռնակները, սարեակ-
ները, արագիլներն ու կունկները, վերջապէս
կկուններն ու սոխակները մինը միւսի յետեկից վե-
րադառնում են օտար տեղերից և վերաշինում են
իրանց բները դաշտերում, անտառներում և ծա-
ռատունկերում:

Աշխատասէր մըջիւնները, գոյնզգոյն թիթեռ-
ները, բզէզները և այլ հազարաւոր միջատներ ու
զեռուներ լոյս աշխարհ են դուրս գալիս: Մե-
ղուն, որ փեթակում քնած էր ողջ ձմեռը, զարթ-
նում է և թողնում է իր մոմեղէն խուցը և թռո-
չում է ծաղիկներից քաղցր մեղր ժողովելու:

Գ Ա Բ Ո Ւ Ն .

Գալիս է գարուն, նոր կեանք է բերում.
Վարդն ու շուշանը բացում են, բուրում,
Թարմ և ծաղկազարդ փայլում է տերե,
Մանուկ գօրութեամբ ծագում է արե:
Շնչում է անտառ: Երգում է ծիծառ:
Վաղորդեան ցօղը սփուռմ է գոհար՝
Կանաչ հովիտը վառում է պայծառ:

Զարթեց բնութիւն կուսական խանդով,
Դէպ' զործ մեղուներ դիմեն եռանդով,
Վաղ առաւտեան ձայնը կոչնակին,
Կանչում է դէպ' դաշտ չարքաշ մշակին:



Ա. ՄԵՍՐՈԴ ՄԱՇՏՈՅ.



Ա. ՄԱՀԱԿ ՊԱՐԹԵԻ.

ՀԱՅՈՅ ՏԱՄԵՐԻ ԳԻՒՏԻԾԻ.




Հայերի քրիստոնէութիւնը ընդունելուց անցել էր մօտ հարփեր տարի, բայց հայոց եկեղեցիներում ժամառացութիւնը լինում էր յոյն կամ ասորի լեզուներով։ Հայոց առաջին դպրոցներում նոյնպէս յունարէն և ասորերէն լեզուներով էր աւանդում ուսումը. այսպէս որ թէ ժողովուրբը եկեղեցում ոչինչ չէր հասկանում, և թէ աշակերտները մեծ գժւարութեամբ էին իւրացնում իրանց սովորածը։

Այս մեծ պակասութեան մասին առաջինը հոգս քաշեց Մեսրոպ Մաշտոցը, որ Տարօն (Մուշ) գաւառի Հացիկ գիւղիցն էր։ Նա ուսիալ մարդ էր. զիտէր յունարէն, ասորերէն և պարսկերէն։ Իր այս խորհուրդը Մեսրոպը յայտնում է այն ժամանակայ Հայոց Կաթողիկոս՝ Միծն Սահակ Պարթևին, որը հաւանութիւն է տալիս և օգնում է նրան հայոց տառերը գտնելու։


Մեսրոպը զիմում է այն ժամանակայ շատ զիտնականների, բայց նրանցից առանձին օգուտ չստանալով եռանդով ուսումնասիրում է հայոց հնչիւնները, երկար ճիզ թափելով Մեսրոպը իր հնարագէտ խելքով ստեղծում է մեր նշանագրերը (406 թ.), որից յետոյ թարգմանուում են հայերէն յունարէնից և ասորերէնից Ա. Գիրքը և ուրիշ շատ գրքեր։




Մ Ա Յ Ի Ե Բ Ա Ր Դ Ք Ի.




Խ Ե Լ Ա Յ Ի Ա Գ Ա Ա Ի.



ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԵՐ.



ԱՂԻԵՍՆ ՈՒ ԱԳԻԲԱԿԸ.



ԱՐԱԳԻԼՆԵՐԻ ՉՈՒՆ.

Պատմեցէք իւ գրեցէք պատկերնեք բովանդակութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐԱՐԱՏԻ
ՎԱՐԴԱՐԻ
ՎԱՐԴԱՐԻ

~~Եղանակի պատճեն~~

ՔԸ աղա աղա աղա աղա
ՕԸ աղա աղա աղա աղա
ՕԸ աղա աղա աղա աղա

աղա աղա աղա աղա աղա
աղա աղա աղա աղա աղա
աղա աղա աղա աղա աղա
աղա աղա աղա աղա աղա

Ճախ աղա աղա աղա

Ճախ աղա աղա աղա
Ճախ աղա աղա աղա

Ճախ

Ճախագա Մ օպեռա Արքա Արքա Արքա
Ճախագա Պ օպեռա Արքա Արքա Արքա

Ճախ աղա և աղա աղա աղա աղա աղա
աղա աղա աղա աղա աղա աղա

Зар. Чистяковъ

- "Ширинъ" № 8. 9678 25;
- "Ширинъ" № 8. " 30;
- "Ширинъ" № 8. " 40;

Давно не приходил вчера был. Пишу
Вас. Кто из вас приедет и что
они хотят? Тогда я имчу
иметь привилегии и 17-го
и 18-го числа

Они приедут вчера

Сегодня вечером
приедут вчера

25

Դիմել Александровъ, учителю М. Тарахчіанъ

Баку, книжный магазинъ „Посредникъ“ Па-
рапетъ.

Թիֆլիսի «Գուտտենբերգ» և «Գիր» գրա-
խանութներին:

2013

1650

ՀՀ Ազգային գրադարան



NL0059423

H Adm.

9-6462